

**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ  
ՇԱՐՑԵՐԻ ԵՎ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ  
ՏԵՍԲՈՎ**

**ԵՐԵՎԱՆ ■ 2006**

ՀՏԴ 336:347.73(479.25)  
ԳՄԴ 65.9(2Հ)261.3+67.99(2Հ)2  
Պ 329

*Սույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային  
Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության  
ծրագրի շրջանակներում*

**Պարզաբանումներ հարցերի և պատասխանների տեսքով:** —  
Եր., Դար, 2006, 80 էջ:

- Պ 329 Գրքում տրված են հարկ վճարողներին առավել հաճախ հե-  
տաքրքրող՝ ինքնագնահատման հարկային համակարգին վե-  
րաբերող հարցերի պատասխանները: Նախատեսված է ձեռ-  
նարկատիրությանը գրադվող քաղաքացիների, հաշվապահնե-  
րի համար:

*Սույն գրքի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպով փո-  
խանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր  
հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:*

Պ  $\frac{0605010204}{0123(01)2006}$  2006

ԳՄԴ 65.9(2Հ)261.3+67.99(2Հ)2

ISBN 99941-47-24-2

© ՀՀ ԿԱ ՀՊԾ, 2006

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

<b>Պետական գրանցում, հաշվառում հարկային մարմիններում</b>	<b>4</b>
<b>Հարկման ռեժիմներ</b>	<b>9</b>
<b>Առանձին հարկատեսակներ, դրանց փոխարինող այլ պարտադիր վճարներ</b>	<b>12</b>
Շահութահարկ	12
Եկամտահարկ	17
Ավելացված արժեքի հարկ	23
Պարզեցված հարկ	30
Հաստատագրված վճարներ	32
<b>Գրքերի հաշվառման ու վարման կարգեր</b>	<b>42</b>
Հասույթների գրանցման գիրք	42
Առաքումների գրանցման գիրք	47
Դրամարկղային գիրք	54
<b>Դրամարկղային գործառնություններ</b>	<b>56</b>
<b>Հսկիչ-դրամարկղային մեքենաներ</b>	<b>60</b>
<b>Ստուգումներ</b>	<b>63</b>
<b>Պատասխանատվություն</b>	<b>78</b>

# ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ, ՐԱԾՎԱՌՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

---

## Հարց.

*Որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ և որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման էությունը*

## **Պատասխան.**

Մինչև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը անձինք պարտավոր են սահմանված կարգով ստանալ պետական գրանցում: Կազմակերպությունները գրանցվում են հիմնականում որպես իրավաբանական անձինք, իսկ քաղաքացիները՝ որպես անհատ ձեռնարկատերեր: Պետական գրանցում ստանալու պահից ճանաչվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքը: Այդ պահից անձինք համարվում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ, ձեռք են բերում քաղաքացիական իրավունքներ ու կրում են դրա հետ կապված պարտականություններ:

Հայաստանի Հանրապետությունում առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն արգելվում է: Առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

## Հարց

*Պետական գրանցման կարգն ու ժամկետները*

## **Պատասխան**

Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն իրականացնում է պետական ռեգիստրը, որը կազմված է կենտրոնական մարմնից եւ տարածքային ստորաբաժանումներից:

Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման կողմից իրավաբանական անձանց պետական գրանցումը կատարվում է ըստ նրանց գտնվելու վայրի: Հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաեւ ոչ առետրային կազմակերպությունների միությունների պետական գրանցումն իրականացնում է պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը: Իրավաբանական անձանց վերա-

կազմակերպմամբ (բացառությամբ վերակազմավորման դեպքերի) պայմանավորված պետական գրանցումներն իրականացվում են պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից:

Իրավաբանական անձանց պետական գրանցման համար օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց գտնվելու վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում, ինչի մասին փաստաթղթերի ընդունման մատյանում կատարվում է գրառում: Անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման համար օրենքով սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացվել բնակության կամ պետական գրանցման վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում:

Սահմանված ձևով բոլոր փաստաթղթերը պետական ռեգիստր ներկայացնելուց եւ նույն օրը տարածքային ստորաբաժանման փաստաթղթերի ընդունման մատյանում գրառում կատարելուց հետո իրավաբանական անձանց պետական գրանցումը կատարվում է 5 օրվա, իսկ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն իրականացվում է 2 օրվա ընթացքում:

Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է գրանցված իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից: Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը հավաստվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնի տարածքային ստորաբաժանման կողմից տրված համապատասխան վկայականով:

## **Հարց**

***Հարկային տեսչությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման կարգը***

### **Պատասխան**

Պետական գրանցում ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են հաշվառվել հարկային տեսչությունում: Այդ ժամկետում տնտեսավարող սուբյեկտները դիմում են ներկայացնում հարկային տեսչություն հաշվառվելու և հարկ վճարողի հաշվառման համար ստանալու համար:

Դիմումում նշվում է իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ՝ ազգանունը, անունը, հայրանունը), գտնվելու վայրը

(հասցեն), կազմակերպական-իրավական տեսակը, գործունեության հիմնական տեսակները, պետական գրանցման մարմնի լրիվ անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, պետական գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, գործունեության իրականացման վայրերը (հասցեները), բանկային հաշվի համարը, դիմումի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

Դիմումը ներկայացնելույ հետո հարկային տեսչությունը հաշվառում է տնտեսավարող սուբյեկտին և նրան շնորհում հարկ վճարողի հաշվառման համար: Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կազմված է ութանիշ թվից: Հարկ վճարողի հաշվառման համարը միակն է և այն որևէ փոփոխման ենթակա չէ:

Իրավաբանական անձանց կնիքների վրա պարտադիր նշվում են հարկ վճարողների հաշվառման համարները, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ կնիք ունենալու դեպքում:

## **Հարց**

### ***Հարկ վճարողի իրավունքները***

#### **Պատասխան**

Հարկ վճարողն իրավունք ունի՝

- ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին.
- հարկային տեսչություն ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ.
- սահմանված կարգով գանգատարկել հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունները.
- առանձին հարկատեսակի մասին օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով դիմել հարկային արտոնություն ստանալու համար:

## **Հարց**

### ***Հարկ վճարողի պարտականությունները***

#### **Պատասխան**

Հարկ վճարողը պարտավոր է՝

- իրականացնել հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ

հաշվառում և (կամ) գրանցումներ), կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ.

- հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե.
- սահմանված ժամկետներում հարկային տեսչություն ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.
- ժամանակին վճարել հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները.
- անհրաժեշտ պայմաններ ապահովել հարկային տեսչության կողմից իրականացվող ստուգումների (ուսումնասիրությունների) համար.
- ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը.
- հարկային տեսչության ստուգումների (ուսումնասիրությունների) հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ (ճշգրտումներ) կատարել հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառմանը և (կամ) գրանցումներին վերաբերող) փաստաթղթերում.
- հարկային տեսչության կազմած ստուգման ակտի փաստերի հետ չհամաձայնելու դեպքում ներկայացնել ակտը չստորագրելու պատճառների վերաբերյալ գրավոր բացատրություն, որը կազմում է ակտի անբաժանելի մասը:

## **Հարց**

### ***Ինչ է հարկային պարտավորությունը***

#### **Պատասխան**

Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի

Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերաջան, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում:

## **Հարց**

***Հայաստանի Հանրապետությունում գործող հարկատեսակները***

### **Պատասխան**

Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են հարկերի հետևյալ տեսակները՝

- շահութահարկ,
- եկամտահարկ,
- ավելացված արժեքի հարկ,
- ակցիզային հարկ,
- գույքահարկ,
- հողի հարկ:

Սահմանված են նաև ավելացված արժեքի հարկին և(կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարներ կամ պարգեցված հարկեր:



# ՇԱՐԿԱՆ ՌԵԺԻՍՆԵՐ

---

## Հարց

### Հարկման ռեժիմների ընտրության կարգը

#### Պատասխան

Հարկային մարմնում հաշվառվելուց հետո հարկ վճարողները մինչև գործունեություն իրականացնելը պարտավոր են որոշել իրենց կողմից հարկային պարտավորությունների կատարման կարգը, նախընտրեն իրենց համար «առավել արդյունավետ» հարկման ռեժիմը: Հայաստանի Հանրապետությունում գործում է հարկման հետևյալ ռեժիմները՝

- ընդհանուր հարկման, որի դեպքում հարկ վճարողը ընդհանուր կարգով հաշվարկում և վճարում է ավելացված արժեքի հարկ և շահութահարկ (անհատ ձեռնարկատիրոջ համար՝ եկամտահարկին),
- պարզեցված հարկով հարկման, այս դեպքում կազմակերպությունները իրենց գործունեության արդյունքում հաշվարկում և վճարում են պարզեցված հարկ, որը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և շահութահարկին (անհատ ձեռնարկատիրոջ համար՝ եկամտահարկին): Հարկ վճարողը կարող է ընտրել պարզեցված հարկով հարկման ռեժիմ, եթե բավարարում է օրենքով սահմանված պահանջներին:
- հաստատագրված վճարով հարկման, որի դեպքում հարկ վճարողը, անկախ՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունքներից հաշվարկում և վճարում է հաստատագրված վճար: Հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և շահութահարկին (անհատ ձեռնարկատիրոջ համար՝ եկամտահարկին):

Հաստատագրված վճարով հարկման ենթակա գործունեության տեսակների համար՝ հարկման ռեժիմի ընտրության հնարավորություն տրված չէ: Այսինքն, եթե հարկ վճարողի կողմից իրականացվելիք գործունեության համար օրենքով նախատեսվում է հաստատագրված վճարով հարկման ռեժիմ, ապա այդ գործունեության մասով հարկ վճարողը կարող է համարվել միայն հաստատագրված վճար վճարող:

## Հարց

### **Հարկ վճարողը երբ է համարվում հաստատագրված վճար վճարող Պատասխան**

Հարկ վճարողը կհամարվի հաստատագրված վճար վճարող, եթե իրականացնում է հետևյալ գործունեության տեսակները.

- Երևան քաղաքում 7մ<sup>2</sup>, այլ վայրերում 10մ<sup>2</sup> առևտրական տարածքը չգերազանցող կրպակների միջոցով իրականացվող առևտուրը.
- առևտրի իրականացման վայրի կազմակերպումը.
- հանրային սննդի ոլորտում գործունեությունը.
- ավտոտրանսպորտային գործունեությունը.
- վարսավիրական ծառայությունը.
- ավտոտեխսպասարկման կայանների գործունեությունը.
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքը
- ավտոկանգառների գործունեությունը.
- արդյունագործական ձկնորսությունը
- խաղատների գործունեության կազմակերպումը.
- դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործումը.
- համակարգչային խաղերի կազմակերպումը.
- տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթը.
- վիճակախաղերի կազմակերպումը
- բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպումը.
- ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորումը.
- բիլիարդ խաղի կազմակերպումը:

Նշված գործունեության տեսակների մասով հարկ վճարողը այլ հարկման ռեժիմի՝ ընդհանուր հարկման կամ պարզեցված հարկով հարկման ռեժիմների ընտրության հնարավորություն չունի:

Գործունեության առանձին ոլորտներում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման հետ կապված մինչև 30մ<sup>2</sup> առևտրական տարածքը ունեցող խանութների, Երևան քաղաքում 7մ<sup>2</sup>, այլ վայրերում 10մ<sup>2</sup> առևտրական տարածքը գերազանցող կրպակների միջոցով

առևտրական գործունեություն և լուսանկարչական լաբորատորիաների գործունեություն իրականացնողները դադարել են համարվել հաստատագրված վճար վճարող: Ընդ որում, այդ գործունեություն իրականացնողները դադարում են համարվել հաստատագրված վճար վճարող հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր ներդրման ժամկետից սկսած (անկախ հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիառելու կամ չկիրառելու հանգամանքից):

## **Հարց**

### ***Հարկ վճարողը երբ կհամարվի պարզեցված հարկ վճարող***

#### **Պատասխան**

Պարզեցված հարկ վճարող կարող են համարվել առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Այդ տնտեսավարող սուբյեկտները կարող են համարվել պարզեցված հարկ վճարողներ, եթե՝

- չեն գրադվում այնպիսի գործունեությամբ, որոնք իրականացնելու դեպքում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չեն կարող համարվել պարզեցված հարկ վճարող,
- տվյալ տարվա հունվարի 1-ից 25-ը ներառյալ իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացրել հայտարարագիր՝ պարզեցված հարկ վճարող համարվելու համար: Հայտարարագրի ձևը սահմանվել է ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի հրամանով:
- նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 50 մլն դրամը: Այս սահմանափակումը չի տարածվում նոտարական գործունեության վրա:

# ԱՌԱՆՁԻՆ ՇԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐ, ԴՐԱՆՑ ՓՈՒՆԱՐԻՆՈՂ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

---

## ՃԱՆՈՒԹԱՇԱՐԿ

### Հարց

#### *Ինչպես է կատարվում նվազագույն շահութահարկի հաշվանցումը Պատասխան*

Եթե հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարը գերազանցում է նվազագույն շահութահարկի տարեկան գումարից, իսկ տվյալ տարում կատարված շահութահարկի ամսական վճարման գումարների հանրագումարը.

ա) գերազանցում է հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարին, ապա՝

կատարված շահութահարկի ամսական վճարման գումարների հանրագումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի տարբերությունը ենթակա է հաշվանցման ռեզիդենտի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով.

բ) չի գերազանցում հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարին և գերազանցում է նվազագույն շահութահարկի տարեկան գումարը, ապա՝

հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի և կատարված շահութահարկի ամսական վճարման գումարների հանրագումարի տարբերությունը վճարվում է պետական բյուջե, ընդ որում՝ այդ տարբերության գումարից առաջնահերթ նվազեցվում են նախորդ հաշվետու տարիներում վճարված և մինչ այդ չնվազեցված նվազագույն շահութահարկի տարեկան գումարները.

զ) չի գերազանցում նվազագույն շահութահարկի տարեկան գումարը, ապա՝

հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի և կատարված շահութահարկի ամսական վճարման գումարների հանրագումարի տարբերությունը վճարվում է պետական բյուջե, ընդ որում՝ հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի և նվազագույն շահութահարկի տարեկան գումարի տարբերության գումարից առաջնահերթ նվազեցվում են նախորդ հաշվետու տարիներում վճարված և մինչ այդ չնվազեցված նվազագույն շահութահարկի տարեկան գումարները:

Եթե հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարը չի գերազանցում նվազագույն շահութահարկի տարեկան գումարից, իսկ տվյալ տարվա համար կատարված շահութահարկի ամսական վճարման գումարների հանրագումարը.

ա) գերազանցում է նվազագույն շահութահարկի տարեկան գումարը, ապա՝

- կատարված շահութահարկի ամսական վճարների գումարների հանրագումարի և նվազագույն շահութահարկի տարեկան գումարի տարբերությունը ենթակա է հաշվանցման ռեզիդենտի այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով,
- նվազագույն շահութահարկի տարեկան գումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի տարբերությունը որպես նվազագույն շահութահարկի գումար ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ ռեզիդենտի լուծարման դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ շահութահարկի ամսական վճարների գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն հետագա տարիների ռեզիդենտի գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարներից (վերջիններս այդ տարիների նվազագույն շահութահարկի տարեկան գումարներից գերազանցելու դեպքում)։

- բ) չի գերազանցում նվազագույն շահութահարկի տարեկան գումարը և գերազանցում է հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը, ապա՝
- նվազագույն շահութահարկի տարեկան գումարի և կատարված շահութահարկի ամսական վճարների գումարների տարբերությունը վճարվում է պետական բյուջե,
  - կատարված շահութահարկի ամսական վճարների գումարների հանրագումարի և հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարի տարբերությունը որպես նվազագույն շահութահարկի գումար ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ ռեզիդենտի լուծարման դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ շահութահարկի ամսական վճարման գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն հետագա տարիների ռեզիդենտի գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարներից (վերջիններս այդ տարիների նվազագույն շահութահարկի տարեկան գումարներից գերազանցելու դեպքում)։
- զ) չի գերազանցում հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարը, ապա՝
- նվազագույն շահութահարկի տարեկան գումարի և կատարված շահութահարկի ամսական վճարների գումարների տարբերությունը վճարվում է պետական բյուջե:

## **Հարց**

***Նվազագույն շահութահարկի տարեկան գումարի և փաստացի շահութահարկի դրական տարբերության դեպքում ինչ կարգով է կատարվում հետագա տարիների շահութահարկից նվազեցումները***

## **Պատասխան**

Հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի վճարվող գումարը նվազագույն շահութահարկի տարեկան գումարից պակաս լինելու դեպքում դրանց տարբերությունը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ ռեզիդենտի լուծարման դեպքում)

կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ շահութահարկի ամսական վճարման գումարների, ինչպես նաև որպես հարկային գործակալ)՝ այն հաշվանցվում է միայն ռեզիդենտի հետագա տարիների շահութահարկի գումարներից (այդ տարիների գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը նվազագույն շահութահարկի տարեկան գումարից գերազանցելու դեպքում):

## **Հարց**

### ***Շահութահարկի նվազագույն գումարի հաշվարկման բազայի նվազեցումները***

#### **Պատասխան**

Նվազագույն շահութահարկի ամսական գումարների հաշվարկման բազան նվազեցվում է՝ այդ ամիսների համար հաշվարկված՝ շահութահարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով (բայց ոչ ավել, քան այդ ամիսների նվազագույն շահութահարկի գումարի հաշվարկման բազայի 50%-ը), ինչպես նաև՝

**ա)** էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրությունը), էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի փոխադրման (հաղորդման), բաշխման, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզիա ունեցող ու դրանց հիման վրա էլեկտրական և ջերմային էներգիայի, բնական գազի առուվաճառք իրականացնող կազմակերպությունների մոտ՝

նախորդ ամսվա ընթացքում այդ գործունեությունների արդյունքում արտադրանքի իրացմանը համապատասխան հաշվեգրված գնովի էներգակիրների (էլեկտրական էներգիա, բնական գազ, միջուկային վառելիք, մագնիս) արժեքի (առանց ԱԱՀ-ի) և նույն ժամանակահատվածում հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների չափով.

**գ)** քաղաքային մարդատար էլեկտրատրանսպորտով (տրոլեյբուս, տրամվայ, մետրո և ճոպանուղի) ուղևորների փոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպությունների մոտ՝

նախորդ ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ձեռքբերման արժեքի (առանց ԱԱՀ-ի) և նույն ժամանակահատվածում հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների չափով.

- դ) հետևյալ ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների մոտ (ամբողջ մեծության չափով)`
- կրթություն,
  - առողջապահություն,
  - թերթերի ու ամսագրերի տպագրություն և իրացում,
  - թանկարժեք քարերի մշակում,
  - ոռոգման և խմելու ջրի մատակարարում (մինչև 2009թ. հունվարի 1-ը):

## **Հարց**

***Շահութահարկի և տարեկան հաշվապահական հաշվետվությունների ներկայացման ժամկետը***

### **Պատասխան**

Կազմակերպությունները յուրաքանչյուր տարվա արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ` մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ):

## **Հարց**

***Եթե կազմակերպությունը միաժամանակ իրականացնում է շահութահարկով և հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակներ, ապա ինչ կարգով է հաշվարկվում շահութահարկը***

### **Պատասխան**

Միաժամանակ շահութահարկով և շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակներ իրականացնող կազմակերպությունները շահութահարկը վճարում են գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին կարգով և չափերով:



Այդ նպատակով կազմակերպությունները վարում են եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների, որոնց գծով շահութահարկը որոշելիս ժամանակաշրջանի ծախսերը բաշխում են, ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ գործունեության առանձին տեսակների գծով ստացված եկամուտների տեսակարար կշիռներից:

## **Հարց**

***ՀԳՄ-ների կտրոնները հանդիսանում են ծախսը հիմնավորող փաստաթուղթ, թե ոչ***

## **Պատասխան**

Շահութահարկ վճարողների համար ՀԳՄ-ների կտրոնները հանդիսանում են ծախսը հիմնավորող փաստաթուղթ՝ տարվա համար 1,0 մլն. դրամը չգերազանցող գումարի սահմաններում:

## **ԵԿԱՍՏԱՆԱՐԿ**

## **Հարց**

***Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի կանխավճարների հաշվարկման կարգն ու վճարման ժամկետները***

## **Պատասխան**

Ընթացիկ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ տարվա ընթացքում որպես անհատ ձեռնարկատեր իրականացվող գործունեության գծով հաշվարկված եկամտահարկի գումարի, նախորդ տարվա պարզեցված հարկի և (կամ) եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարի մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարների հանրագումարի 1/6-ի չափով: Նվազագույն եկամտահարկի տարեկան գումարի մեծությունը չի ազդում հաջորդ տարվա եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարի մեծության վրա:

Եկամտահարկի կանխավճարների եռամսյակային գումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից:

## **Հարց**

***Եկամտահարկի նվազագույն գումարի եռամսյակային վճարման չափերի որոշման կարգն ու վճարման ժամկետները***

### **Պատասխան**

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների (այդ թվում՝ արտարժույթի)), արտադրանքի (բացառությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի) իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամուտներից (իրացումից ստացվող հասույթից) ելնելով, ներառելով վարկերի (փոխառությունների) դիմաց ստացվող տոկոսները և վարձավճարները: Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը հաշվարկվում է նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայի և դրանից կատարված նվազեցումների տարբերության գումարի 1%-ի չափով:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից:

## **Հարց**

***Անհատ ձեռնարկատերերին եկամտահարկի և սոցիալական ասպահովագրության վճարի նվազագույն գումարներից ազատելու կարգը***

### **Պատասխան**

Մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերը ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ասպահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից: Այդ անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մա-

սին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Այդ անհատ ձեռնարկատերերի դիմումները և պետական գրանցման վկայականները հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի մայիսի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության տարածքային ստորաբաժանումներին՝ մինչև 2006 թվականի հուլիսի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու և նրանց վկայականները օրենքով սահմանված կարգով ոչնչացնելու համար:

## **Հարց**

*Անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտահարկի և սոցիալական ապահովագրության վճարների գծով տարեկան եկամուտների հայտարարագրերի ներկայացման կարգն և ժամկետները*

## **Պատասխան**

Անհատ ձեռնարկատերերը իրենց հարկային տարվա տարեկան եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնում են հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ և հայտարարագրով հաշվարկված եկամտահարկի գումարը վճարում է պետական բյուջե մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Անհատ ձեռնարկատերերը հայտարարագրերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտացոլված տվյալներում (ներկայացնել նոր (ճշտված) հայտարարագիր):

Անհատ ձեռնարկատերերը տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և սոցիալական վճարների նվազագույն գումարների տարբերությունը պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ: Անհատ ձեռնարկատերերը, յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև օրացույցային տարվան հաջորդող մարտի 1-ը, հարկային մարմին են ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր: Անհատ ձեռնարկատերերը նախորդ հաշվետու տարիների համար ներկայացված հայտարարագրերում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմին ներկայացնել ճշտված հայտարարագրեր, որոնց հիման վրա կատարվում է այդ տարիների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ, եթե

ճշտված հայտարարագրերը չեն վերաբերում հարկային մարմնի կողմից ստուգվող կամ ստուգված տարիներին:

## **Հարց**

*2005թ. ապրիլի 1-ից արտարժույթի առք ու վաճառքի գործունեությունը ընդհանուր կարգով հարկելու հետ կապված եկամտահարկի հայտարարագրերի ներկայացման, կանխավճարների և նվազագույն գումարների հաշվարկման կարգը*

### **Պատասխան**

Նախորդ տարվա հաստատագրված վճարի մեջ բաժին ընկնող եկամտահարկի գումարները (տվյալ դեպքում՝ 100%-ը) հաշվի են առնվելու ընթացիկ տարվա անհատ ձեռնարկատիրոջ եկամտահարկի կանխավճարների մուծումների ժամանակ: Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի 1/6-ի չափով (յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ):

Արտարժույթի առք ու վաճառքի գործունեության մասով կազմակերպությունների համար եկամտահարկի նվազագույն գումարներ չեն հաշվարկվում:

Ավելացված արժեքի հարկով ազատված շրջանառություն է համարվում արտարժույթի վաճառքից ստացված հասույթը, որը արտա-ցույվում է ԱԱՀ-ի հաշվարկում:

## **Հարց**

*Անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականի ժամանակավորապես հարկային մարմնին հանձնելու կարգը*

### **Պատասխան**

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականի ժամանակավորապես հանձնումը իր հաշվառման վայրի հարկային մարմնին կատարվում է գրավոր դիմումի հետ միասին: Դիմումի ներկայացման և պետական գրանցման վկայականի հանձնման օրը հարկային անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է վկայականի հանձնումը հավաստող տեղեկանք (ստացական):

Ընդունված դիմումը կարվում է հարկ վճարողի հարկային գործում, իսկ պետական գրանցման վկայականը՝ դրա համար առանձնացված թղթապանակում (թղթապանակներում):

## **Հարց**

*Հարկային մարմին ժամանակավորապես հանձնված պետական գրանցման վկայականը անհատ ձեռնարկատիրոջ կողմից հետ ստանալու կարգը*

### **Պատասխան**

Պետական գրանցման վկայականը անհատ ձեռնարկատերը հարկային մարմնից հետ է ստանում գրավոր դիմումի համաձայն, որին կցվում է տեղեկանքը (ստացականը), իսկ դրա կորստի դեպքում՝ անձնագրի պատճենը (անձնագրի բնօրինակի ներկայացմամբ): Պետական գրանցման վկայականը հարկային մարմնի կողմից վերադարձվում է դիմումի ներկայացման օրը:

Պետական գրանցման վկայականները հետ ստանալու վերաբերյալ անհատ ձեռնարկատերերի դիմումները, տեղեկանքը (ստացականը) կամ անձնագրի պատճեն պահվում են հարկ վճարողի հարկային գործում:

## **Հարց**

*Պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու դեպքում անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվետվություններ (հայտարարագրեր) , հաշվարկների (հայտարարագրեր) ներկայացման կարգը*

### **Պատասխան**

Պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը՝

- ա) պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև պետական գրանցման վկայականը հետ ստանալու հաշվետու ժամանակաշրջանը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվետվություններ (հայտարարագրեր) և հարկային հաշվարկներ (հայտարարագրեր) չեն ներկայացնում,
- բ) պետական գրանցման վկայականը մինչև հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու օրը և հետ ստանալու օրվանից հաշվետու ժամանակաշրջանների համար պարտադիր սո-

ցիալական ապահովագրության վճարների հաշվետվություններ (հայտարարագրեր) և հարկային հաշվարկներ (հայտարարագրեր) ու տեղեկություններ ներկայացնում են ընդհանուր սահմանված կարգով ու ժամկետներում.

- զ) պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու եռամսյակից հետո մինչև պետական գրանցման վկայականը հետ ստանալու եռամսյակը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում,
- ը) եթե պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնել են մինչև տվյալ եռամսյակի եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների օրենքով սահմանված վճարման ժամկետը, ապա այդ եռամսյակի եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում,
- ե) եթե հարկային մարմնին ժամանակավորապես հանձնած պետական գրանցման վկայականը հետ են ստանում տվյալ եռամսյակի եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների օրենքով սահմանված վճարման ժամկետից հետո, ապա այդ եռամսյակի եկամտահարկի կանխավճարների և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում:

## **Հարց**

*Կազմակերպությունների կողմից անհատ ձեռնարկատերերին վճարվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ներկայացվում են, թե ոչ*

## **Պատասխան**

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրենց կողմից անհատ ձեռնարկատերերին վճարված եկամուտների (այդ թվում՝ ՀՂՄ-ների կտրոններով «հիմնավորված») վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են ընդհանուր սահմանված կարգով:

## **Հարց**

*Որ դեպքերում է կազմակերպությունը ներկայացնում տեղեկություններ ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին*

### **Պատասխան**

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը իրենց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վճարված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացնում, սահմանված կարգով իրականացրել են հարկի պահում (գանձում) կամ վճարել են նվազեցվող եկամուտներ:

Մնացած բոլոր դեպքերում տեղեկությունները ներկայացվում են ընդհանուր սահմանված կարգով:

## **ԱՎԵԼԱՑՎԱՆ ԱՐԺԵՔԻ ՇԱՐԿ**

### **Հարց**

*ԱԱՀ վճարողները երբ են համարվում՝*

- ա) ամսական ԱԱՀ վճարողներ,*
- բ) եռամսյակային ԱԱՀ վճարողներ.*

### **Պատասխան**

Ընթացիկ օրացույցային տարում ԱԱՀ վճարողները կհամարվեն ամսական ԱԱՀ վճարողներ, եթե նրանց կողմից՝ նախորդ օրացույցային տարում մատակարարված ապրանքների կամ մատուցված ծառայությունների կամ անհատույց (մասնակի հատուցման) սպառման գործարքներից ստացված հասույթը գերազանցել է 60.0 մլն. դրամը:

Նախորդ տարվա հասույթը մինչև 60.0 մլն. դրամ (ներառյալ՝ 60.0 մլն. դրամ) կազմելու դեպքում, ընթացիկ օրացույցային տարում ԱԱՀ վճարողները կհամարվեն եռամսյակային ԱԱՀ վճարողներ:

### **Հարց**

*Ամսական ԱԱՀ վճարող համարվելու առումով՝ նշանակություն ունի արդյոք եռամսյակային ԱԱՀ վճարող համարվողի ընթացիկ տարում ստացած հասույթների չափը.*

**Օրինակ.** *Կազմակերպությունը 2006 թվականին համարվել է եռամսյակային ԱԱՀ վճարող, քանի որ նախորդ տարվա հասույթը չի գերազանցել 60.0 մլն. դրամը: Կազմակերպության 2006 թվականի*

*1-ին կիսամյակի արդյունքներով ստացած հասույթը կազմել է 70 մլն. դրամ:*

*Օրինակի դեպքում կազմակերպությունը 2006 թվականի 2-րդ կիսամյակի համար կհամարվի ամսական ԱԱՀ վճարող, թե ոչ:*

#### **Պատասխան**

Ոչ, չի համարվի, քանի որ ամսական ԱԱՀ վճարող համարվելու առումով հիմք է ընդունվում ոչ թե ընթացիկ տարվա հասույթների չափը, այլ նախորդ տարվա հասույթի չափը: Օրինակի դեպքում կազմակերպությունը ամսական ԱԱՀ վճարող կհամարվի 2007 թվականին:

#### **Հարց**

*Ամսական կամ եռամսյակային ԱԱՀ վճարող համարվելու առումով՝ որն է համարվում հասույթ.*

#### **Պատասխան**

Հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեությունից ստացված ընդհանուր հասույթը՝ առանց կատարված ծախսերի (այդ թվում՝ ապրանքների ձեռք բերման կամ ծառայությունների ստացման ծախսերի) պակասեցման: Առևտրի ոլորտում հասույթը հավասարեցված է ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալին: Հասույթի կազմում՝ անուղղակի հարկերը հաշվի չեն առնվում:

#### **Հարց**

*Որ դեպքերում է շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:*

#### **Պատասխան**

Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը համարվում է ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն, եթե տարան իրացվում է անմիջական արտադրողի կամ անմիջական ներմուծողի կողմից:

Մնացած բոլոր դեպքերում, եթե շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարան իրացվում է ոչ անմիջական տարա արտադրողի կամ ներմուծողի կողմից, տարայի արժեքը չի համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն: Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարան անմիջական արտադրողի կամ ներմուծողի՝ ԱԱՀ-ով ձեռք բերման դեպքում, վճարված ԱԱՀ-ի գումարը ձեռք բերողը միացնում է տարայի արժեքին:



Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարալի՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանման գործարքի դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափ:

### **Հարց**

*Ինչ կարգ է նախատեսված ոչ իրացման նպատակով ձեռք բերված կամ ներմուծված մարդատար ավտոմեքենաների համար վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար.*

### **Պատասխան**

Ոչ իրացման նպատակով ձեռք բերված կամ ներմուծված մարդատար ավտոմեքենաների համար վճարված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման և պետք է միացվեն այդ ավտոմեքենաների ձեռք բերման արժեքին: ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցվել ավտոմեքենաների իրացման դեպքում: Այդ ժամանակ, հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշվում է ավտոմեքենաների մնացորդային արժեքի նկատմամբ՝ 16.67% հաշվարկային դրույթաչափ կիրառելով:

**Օրինակ.** *Ա կազմակերպությունը 2005 թվականի սեպտեմբերին ոչ իրացման նպատակով ձեռք է բերել մարդատար ավտոմեքենա, որի համար վճարել է 8400.0 հազ. դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 1400.0 հազ. դրամ: 2006 թվականի սեպտեմբերին, այդ ավտոմեքենան իրացվել է 7200.0 հազ. դրամով, այդ թվում ԱԱՀ՝ 1200.0 հազ. դրամ: Ընդունենք, որ ավտոմեքենաների համար ամորտիզացիոն ժամկետ է սահմանվել 5 տարին:*

*Օրինակի դեպքում, Ա կազմակերպությունը 2005 թվականի սեպտեմբերին ոչ իրացման նպատակով ձեռք բերված մարդատար ավտոմեքենայի համար վճարած ԱԱՀ-ի գումարը պետք է միացնի ավտոմեքենայի ձեռք բերման արժեքին, որը կկազմի 8400.0 հազ. դրամ: 2006 թվականի սեպտեմբերին, ավտոմեքենայի իրացման ժամանակ հաշվարկվում է մեքենայի ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը, որը կկազմի 1680.0 հազ. դրամ (8400.0 : 5): Իրացման պահին մեքենայի մնացորդային արժեքը կկազմի 6720.0 հազ. դրամ (8400.0 – 1680.0):*

*Հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշվում է մնացորդային արժեքի նկատմամբ 16.67% հաշվարկային դրույթաչափ կիրառելով, որը կկազմի 1120.2 հազ. դրամ (6720.0 × 16.67%):*

*Օրինակի դեպքում, Ա կազմակերպությունը 2006 թվականի սեպտեմ-*

բերին իրացրած ավտոմեքենայի համար հաշվարկած՝ 1200.0 ԱԱՀ-ի գումարից կարող է հաշվանցել 1120.2 հազ. դրամը, իսկ տարբերությունը՝ 79.8 հազ. դրամ ԱԱՀ-ի գումարը պարտավոր է սահմանված ժամկետում վճարել պետական բյուջե:

## **Հարց**

**Ապրանքներ ձեռք բերողը կամ ծառայություններ ստացողը ինչ վավերապայմանների առկայության դեպքում կարող է կատարել ԱԱՀ-ի գումարի հաշվանցում.**

### **Պատասխան**

ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը կարող է կատարվել, եթե՝

- ապրանքներ ձեռք բերողը կամ ծառայություն ստացողը օրենքով սահմանված կարգով համարվել է ԱԱՀ վճարող,
- ձեռք բերված ապրանքի կամ ստացված ծառայության դիմաց վճարումը կատարվել է բանկային փոխանցմամբ,
- Առկա է մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշիվը, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագիրը,
- Ապրանքները հանձնվել են ձեռք բերողին կամ ծառայությունները ստացվել է ծառայությունը ստացողի կողմից,
- Ձեռք բերված ապրանքները կամ ստացված ծառայությունները օրենքով սահմանված կարգով չեն համարվել ԱԱՀ-ից ազատված կամ ԱԱՀ-ով չհարկվող (հարկման օբյեկտ չհամարվող),
- Ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների գործարքները օրենսդրությամբ սահմանված կարգով չեն ճանաչվել առոչինչ կամ անվավեր գործարքներ,
- Ապրանքները կամ ծառայությունները ձեռք չեն բերվել պարզեցված հարկ վճարողից,
- Ձեռք բերված ապրանքները կամ ծառայությունները չեն վերաբերվել հաստատագրված վճարով հարկվող գործունեությանը:

## **Հարց**

**Ինչպես վարվել, երբ ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ի գումարները հաշվանցելուց հետո պարզվել է, որ՝**

- ա) այդ գործարքները օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել են առոչինչ կամ անվավեր գործարքներ,
- բ) ձեռք բերված ապրանքները կամ ստացված ծառայությունները օրենքով սահմանված կարգով համարվել են ԱԱՀ-ից ազատված կամ ԱԱՀ-ով չհարկվող (հարկման օբյեկտ չհամարվող),
- գ) ապրանքները կամ ծառայությունները ձեռք են բերվել պարզեցված հարկ վճարողից,
- դ) ձեռք բերված ապրանքները կամ ծառայությունները վերաբերվել են հաստատագրված վճարով հարկվող գործունեությանը:

### **Պատասխան**

Եթե ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման ժամանակ հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումից հետո, որոշ ժամանակ անց պարզվել է, որ այդ գործարքները օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել են առոչինչ կամ անվավեր գործարքներ կամ այդ գործարքները օրենքով սահմանված կարգով համարվել են ԱԱՀ-ից ազատված (այդ թվում՝ ԱԱՀ-ի հարկման օբյեկտ չհամարվող), ապա նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները պետք է վերաձևակերպվեն և միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման գնին: Վերաձևակերպումը կատարվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է ԱԱՀ-ի հաշվանցումը):

**Օրինակ 1.** *Ամսական ԱԱՀ վճարվող համարվող՝ Ա կազմակերպությունը 2006 մարտին Բ կազմակերպության կողմից դուրս գրված հարկային հաշվի հիման վրա ձեռք է բերել անասնաբուժական դեղամիջոցներ: Չեռք բերված անասնաբուժական դեղամիջոցների համար դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը՝ Ա կազմակերպությունը հաշվանցել է 2006 թ. մարտին և ցույց է տվել հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում:*

*Ա կազմակերպությունը 2006 թ. հունիսին պարզել է, որ անասնաբուժական դեղամիջոցների իրացումն ազատված է ԱԱՀ-ից: Տվյալ իրավիճակում Ա կազմակերպությունը պարտավոր է 2006թ. մարտին հաշվանցած ԱԱՀ-ի գումարը վերաձևակերպել և միացնել ապրանքի ձեռք բերման գնին: Վերաձևակերպումը կատարվում է մարտ ամսվա համար և այդ նույն հաշվետու ժամանակաշրջանի համար, սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացվում ԱԱՀ-ի ճշտված հաշվարկ:*

Եթե ապրանքների կամ ծառայությունների) ձեռք բերման ժամանակ հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումից հետո, որոշ ժամանակ անց պարզվել է, որ այդ գործարքները վերաբերվել են պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարով համարվող գործունեությանը, ապա նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները պետք է վերաձևակերպվեն և միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման գնին: Վերաձևակերպումը կատարվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է ԱԱՀ-ի հաշվանցման անթույլատրելիությունը:

**Օրինակ 2.** *Եռամսյակային ԱԱՀ վճարող համարվող՝ Մ կազմակերպությունը 2006թ. 2-րդ եռամսյակում պարզել է, որ 1-ին եռամսյակում հարկային հաշվով ձեռք բերված ապրանքների մատակարարը համարվել է պարզեցված հարկ վճարող: Առաջին եռամսյակում Մ կազմակերպությունը հաշվանցել է պարզեցված հարկ վճարողից ձեռք բերված ապրանքների հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը և ցույց է տվել հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում: Նման իրավիճակում Մ կազմակերպությունը պարտավոր է 2006 թ. 2-րդ եռամսյակում վերաձևակերպել 1-ին եռամսյակում հաշվանցած ԱԱՀ-ի գումարը և ցույց տալ 2-րդ եռամսյակի ԱԱՀ -ի հաշվարկի 16.2 տողի «Բ.» սյունակում, որպես՝ պակասեցման ենթակա գումար: Հարկային մարմին ներկայացված՝ 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի ճշտում չի կատարվում:*

### **Հարց**

*Բենզինի կամ դիզելային վառելիքի ձեռք բերման համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման շրջանակներում համարվում են արդյոք հարկային հաշիվներ:*

*Պարտավոր են արդյոք այդպիսի հաշվարկային փաստաթղթեր դուրս գրած կամ ստացած անձինք, այդ մասին տեղեկություններ ներկայացնել հարկային մարմին այն կարգով և ժամկետներում, ինչպիսիք սահմանված են 100.0 հազ. դրամ շրջանառությունը գերազանցող հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման համար:*

### **Պատասխան**

Բենզինի կամ դիզելային վառելիքի ձեռք բերման համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման շրջանակներում չեն համարվում հարկային

հաշիվներ, քանի որ այդպիսի հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող անձինք պարտավոր չեն այդ փաստաթղթերում առանձին տողով նշում կատարել ԱԱՀ-ի գումարի մասին: Քանի որ նման հաշվարկային փաստաթղթերը չեն համարվում հարկային հաշիվներ, ուստի նման փաստաթղթեր դուրս գրած կամ ստացած անձինք պարտավոր չեն դրանց մասին հարկային մարմին ներկայացնել տեղեկություններ:

Եթե բենզինի կամ դիզելային վառելիքի ձեռք բերման համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթում մատակարարը առանձին նշել է ԱԱՀ-ի գումարի մասին, ապա այդպիսի հաշվարկային փաստաթուղթը կհամարվի հարկային հաշիվ և եթե շրջանառությունը գերազանցել է 100.0 հազ. դրամը, ապա հարկային հաշիվ դուրս գրած և ստացած անձինք պարտավոր են այդ մասին՝ սահմանված կարգով տեղեկություններ ներկայացնել հարկային մարմին:

### **Հարց**

*ԱԱՀ-ի հաշվանցման նպատակով՝ համարվում է արդյոք բանկային փոխանցում, եթե ձեռք բերված ապրանքների (ծառայությունների) դիմաց գնորդը վճարումը կատարել է կանխիկ դրամը բանկում մատակարարի բանկային հաշվին մուտքագրելու միջոցով.*

### **Պատասխան**

Եթե ձեռք բերված ապրանքների (ծառայությունների) դիմաց գնորդը վճարումը կատարել է կանխիկ դրամը բանկում մատակարարի բանկային հաշվին մուտքագրելու միջոցով, ապա ԱԱՀ-ի հաշվանցման նպատակով՝ այն համարվում է բանկային փոխանցում:

### **Հարց**

*Որ դեպքերում կարող են ԱԱՀ վճարող համարվողները հարկային մարմին ներկայացնել ԱԱՀ-ի ճշտված հաշվարկներ.*

### **Պատասխան**

ԱԱՀ վճարող համարվողները, ԱԱՀ-ի ճշտված հաշվարկներ կարող են ներկայացնել, եթե նախկինում հարկային մարմին ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկների տվյալներում ինքնուրույն հայտնաբերել են սխալներ, բացառությամբ հետևյալ դեպքի: Եթե ինքնուրույն հայտնաբերված սխալը կապված է ԱԱՀ վճարող չհանդիսացող անձի կողմից հարկային հաշիվ դուրս գրելու հետ կամ ԱԱՀ-ից ազատված կամ հարկման օբյեկտ չհամարվող կամ ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարք-

ների համար հարկային հաշիվ դուրս գրելու հետ, ապա այդ մասով չի թույլատրվում նախկինում ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների փոխաբերեն ներկայացնել ԱԱՀ-ի ճշտված հաշվարկ: Նման դեպքերում, հարկային հաշիվ դուրս գրած անձը պարտավոր է հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը սահմանված ընդհանուր կարգով վճարել բյուջե:

## **ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԴՀ**

### **Հարց**

*Պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագրի ներկայացման կարգը*

### **Պատասխան**

«Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին բավարարող հարկ վճարողներն տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում սահմանած ձևով հայտարարագիր՝ հունվարի 1-ից 25-ը (ներառյալ): Այդ դեպքում հարկ վճարողը համարվում է պարզեցված հարկ վճարող ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով, (բացառությամբ՝ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով):

Հայտարարագրում ոչ ճիշտ այնպիսի տեղեկություններ ներառելիս, որի համար օրենքով նախատեսված են տուգանքներ, հարկ վճարողները պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված այլ պահանջները բավարարելու դեպքում շարունակում են մնալ պարզեցված հարկ վճարող՝ մինչև տվյալ տարվա վերջը:

### **Հարց**

*Երբ է պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին*

### **Պատասխան**

Պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե նա՝

- ա) գրավոր դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին՝ ընդհանուր կարգով հարկման, հաշվառման և հաշվետվությունների համակարգի անցնելու վերաբերյալ.

- բ) պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում թույլ է տվել ակցիզային հարկով հարկվան ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին վերաբերող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170<sup>7</sup>, 170<sup>8</sup>, 170<sup>9</sup> կամ 170<sup>12</sup> հոդվածների մեկից ավելի խախտման դեպքեր.
- գ) գերազանցում է ժամկետանց հարկային պարտավորությունների սահմանաչափը (100,0 հազ. դրամը).
- դ) իրականացնում է պարզեցված հարկ վճարողների համար անթույլատրելի գործունեություն (բացառությամբ՝ խորհրդատվական ծառայություններ մատուցող նուտարների).
- ե) եռամսյակի ընթացքում իր կողմից Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնց համար ավելացված արժեքի հարկը վճարված չի եղել ներմուծման պահին գերազանցում է 250,0 հազ. դրամը.
- զ) հանդիսանում է համատեղ գործունեության պայմանագրի կողմ.
- է) տվյալ տարվա սկզբից ունեցել է 50,0 մլն. դրամից ավելի իրացման շրջանառություն (բացառությամբ՝ նուտարների).
- ը) տվյալ տարվա որևէ պահին ունեցել է 15,0 մլն. դրամը գերազանցող՝ իրեն պատկանող ապրանքային մնացորդ (հաշվարկված ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով):

## **Հարց**

***Պարզեցված հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման, գրքերի հաշվառման կարգը***

### **Պատասխան**

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանած ձևով պարզեցված հարկի հաշվարկը: Պարզեցված հարկ վճարողները հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ):

Պարզեցված հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կարող են չվարել՝ հաշվապահական հաշվառում, Հայաստանի Հանրապետության կառավարության 31.07.1997թ. N 314 և N 315 որոշումներով սահմանված առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր ու արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր: Բացառապես պարզեցված հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունները հարկային մարմիններ ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններ կարող են չներկայացնել: Պարզեցված հարկ վճարողները վարում են դրամարկղային գրքեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

### **Հարց**

*Նոր ստեղծված կազմակերպությունները պարզեցված հարկ վճարող համարվելու ժամկետների վերաբերյալ*

### **Պատասխան**

Նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունները (բացառությամբ՝ վերակազմավորման դեպքերի) պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նրանք պետական գրանցման օրվանից 1-ամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանված ձևով գրավոր հայտարարագիրը:

## **ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԿՃԱՐՆԵՐ**

### **Հարց**

*Որ հարկատեսակներին է փոխարինում հաստատագրված վճարը.*

### **Պատասխան**

Հաստատագրված վճար սահմանված է գործունեության որոշ տեսակների համար: Հաստատագրված վճարը փոխարինում է իրավաբանական անձանց համար ավելացված արժեքի հարկին և շահութահարկին, իսկ անհատ ձեռնարկատերերի համար ավելացված արժեքի հարկին և եկամտահարկին:



Հաստատագրված վճար վճարողները այլ հարկատեսակներով հարկման օբյեկտներ ունենալու դեպքում, ինչպես նաև որպես հարկային գործակալ համարվելու դեպքերում, հարկերը հաշվարկվում են այդ հարկատեսակների մասին օրենքով սահմանված կարգով:

**Օրինակ.** *Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ավտոտրանսպորտային գործունեություն: Կազմակերպությունը այդ գործունեության իրականացման համար ունի արտադրական շինություն, 10 հատ ավտոմեքենա և 18 վարձու աշխատող: Կազմակերպությունը ավտոտրանսպորտային գործունեության համար կհաշվարկի ու կվճարի հաստատագրված վճար, շենքի և 10 հատ ավտոմեքենայի համար գույքահարկ՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Վարձու աշխատողների մասով կազմակերպությունը հանդիսանում է հարկային գործակալ և նա պարտավոր է վարձու աշխատողների փոխարեն հաշվարկել և պետական բյուջե վճարել եկամտահարկ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:*

## **Հարց**

*Ինչպես է որոշվում հաստատագրված վճարի չափը*

### **Պատասխան**

Յուրաքանչյուր գործունեության համար հաստատագրված վճարը հաշվարկվում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալի չափով: Գործունեության յուրաքանչյուր տեսակի համար օրենքով սահմանված են տարբեր ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ: Կրպակների միջոցով առևտրի, առևտրի իրականացման վայրի կազմակերպման, ավտոկանգառների, տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթի գործունեության համար ուղղիչ գործակիցներ ըստ գոտիների սահմանված են նաև ՀՀ կառավարության որոշմամբ:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի համար, բացառությամբ վիճակախաղի, հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՎ} = \text{բազմապատիկ մեծություն} \times \\ \times \text{ելակետային տվյալներ} \times \text{ուղղիչ գործակիցներ}$$

Վիճակախաղերի կազմակերպման դեպքում հաստատագրված վճարի չափը որոշվում է իրացված տոմսերի ընդհանուր արժեքի 20%-ի

չափով, իսկ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը սահմանվում է տոտալիզատորի տոմսի վրա կատարված գրառումների հանրագումարի 5 տոկոսի չափով՝ բայց ոչ պակաս, քան 1,0 մլն դրամը:

## **Հարց**

*Ինչ ժամանակաշրջանի համար է հաշվարկվում հաստատագրված վճարը և որն է վճարման ժամկետը*

### **Պատասխան**

Բոլոր գործունեության տեսակների գծով հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար: Հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

## **Հարց**

*Հաստատագրված վճար վճարողները ինչ կարգով են ներկայացնում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունները*

### **Պատասխան**

Հաստատագրված վճար վճարողները հաստատագրված վճարի հաշվարկման համար ներկայացնում են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն: Այդ հայտարարությունը հաստատագրված վճար վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում նախապես՝ մինչև գործունեություն իրականացնելը (սկսելը): Հայտարարությունը ներկայացվում է երկու օրինակից: Հարկային տեսչության կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Վիճակախաղի (այդ թվում նաև տոտալիզատորի) կազմակերպիչները ելակետային տվյալի վերաբերյալ հայտարարությունները նախապես չեն ներկայացնում: Այդ գործունեության համար հայտարարություն ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

***Օրինակ.** Կազմակերպությունը նախատեսել է մայիսի 1-ից գործունեություն իրականացնել հանրային սննդի ոլորտում: Մինչև մայիսի 1-ը կազմակերպությունը իր հաշվառման վայրի հարկային տեսչու-*

թյուն ներկայացնում է «Հանրային սննդի ոլորտում գործունեության համար ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ» հայտարարություն՝ 2 օրինակից: Հարկային տեսչության կողմից կնքվում և համարակալվում է հայտարարության 2 օրինակը և 1 օրինակը վերադարձվում է կազմակերպությանը: Կազմակերպությունը հարկային մարմնի կողմից հաշվառված հայտարարության օրինակը փակցնում է հանրային սննդի օբյեկտի տեսանելի վայրում:

Կազմակերպությունը հայտարարություն կարող է ներկայացնել ինչպես մայիս ամսվա համար, այնպես էլ մայիս-հունիս ամիսների համար:

Կազմակերպությունը հանրային սննդի գործունեության մասով պարտավոր է նոր հայտարարություն ներկայացնել նաև հունիս և դեկտեմբեր ամիսներին:

## **Հարց**

**Ինչպես է հաշվարկվում հաստատագրված վճարը գործունեությունը ամսվա ընթացքում սկսելու դեպքում**

### **Պատասխան**

Ամսվա ընթացքում գործունեություն սկսելու դեպքում հաստատագրված վճարի ամսական չափի հաշվարկման կարգերը տարբեր են ելնելով ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերը ելակետային տվյալ համարելու կամ չհամարելու հետ կապված:

Եթե հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար գործունեության իրականացման օրացույցային օրերը համարվում է ելակետային տվյալ, ապա հաստատագրված վճարի չափը որոշվում է ամսվա ընթացքում գործունեության սկսման օրվանից:

Եթե հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար գործունեության իրականացման օրացույցային օրերը չեն համարվում ելակետային տվյալ, ապա հաստատագրված վճարի չափը որոշվում է ամբողջ ամսվա համար, անկախ գործունեության սկսման օրվանից:

**Օրինակ.** Կազմակերպությունը մարտի 10-ից նախատեսել է իրականացնել գործունեություն հանրային սննդի ոլորտում և մատուցել վարսավիրական ծառայություն: Երկու գործունեության տեսակներն էլ հարկվում են հաստատագրված վճարով: Յուրաքանչյուր գործունեության մասով մարտի 5-ին կազմակերպությունը իր հաշվառման վայրի հարկային տեսչություն է ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն (2 օրինակից):

նակից): Երկու հայտարարություններում գործունեության իրականացման վայր նշվել է Երևան քաղաքը:

Հանրային սննդի գործունեության համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը, որը հայտարարությունում նշվել է 45 մ<sup>2</sup>: Հանրային սննդի գործունեության համար հաստատագրված վճարի չափը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՎ} = 2000 \times \text{սպասարկման սրահի մակերես} \times \\ \times \text{սպասարկման սրահի մակերեսի չափի հետ} \\ \text{կապված ուղղիչ գործակից}$$

Անկախ նրանից, որ գործունեությունը սկսվել է մարտի 10-ից, հանրային սննդի գործունեության հաստատագրված վճարի չափը կհաշվարկվի ամբողջ ամսվա համար և կկազմի՝  $\text{ՀՎ} = 2000 \times 45 \times 0.75 = 67500$  դրամ: 0.75 ուղղիչ գործակիցը սահմանված է մինչև 50 մ<sup>2</sup> սպասարկման սրահ ունեցող հանրային սննդի օբյեկտների համար:

Վարսավիրական ծառայության համար ելակետային տվյալներ են համարվում վարսավիրական ծառայության աշխատատեղերի քանակը, որը հայտարարությունում նշվել է 3 և ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերի քանակը: Օրերի քանակը ելակետային տվյալ համարելու հետ կապված ստացվում է, որ մարտ ամսվա ընթացքում վարսավիրական ծառայության է մատուցվում 22 օրվա ընթացքում (մարտի 10-31-ը): Վարսավիրական ծառայության համար հաստատագրված վճարի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՎ} = 500 \times \text{աշխատատեղերի քանակ} \times \\ \times \text{գործունեության իրականացման օրերի քանակ} \times \\ \times \text{վարսավիրանոցի գտնվելու վայրի հետ կապված} \\ \text{ուղղիչ գործակից}$$

Այդ գործունեության համար հաստատագրված վճարը մարտի համար կկազմի՝  $\text{ՀՎ} = 500 \times 3 \times 22 \times 1.0 = 33000$  դրամ: Օրինակի դեպքում 1.0-ն վարսավիրանոցի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցն է:

## Հարց

Եթե կազմակերպությունը իրականացնում է հանրային սննդի գործունեություն, և հանրային սննդի գործունեության իրականացման վայրի սպասարկման մակերեսը գերազանցում է 300 մ<sup>2</sup> տարածքը ապա ինչպես է կիրառվում սպասարկման մակերեսի մեծության հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցը:

## **Պատասխան**

Եթե հանրային սննդի գործունեության իրականացման վայրի սպասարկման սրահի մակերեսը գերազանցում է 300 մ<sup>2</sup> մակերեսը, ապա այդ վայրի համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է հետևյալ կարգով.

ա) մինչև 500 մ<sup>2</sup> մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար.

$$\text{ՀՎ} = 2000 \times (300 + (\text{սպասարկման սրահի մակերես} - 300) \times 0.6) \times \text{օրենքով սահմանված այլ գործակիցներ}$$

բ) 500 մ<sup>2</sup> գերազանցող մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար.

$$\text{ՀՎ} = 2000 \times (300 + (500 - 300) \times 0.6 + (\text{սպասարկման սրահի մակերես} - 500) \times 0.3)) \times \text{օրենքով սահմանված այլ գործակիցներ}$$

## **Հարց**

*Եթե հաստատագրված վճար վճարողը հաստատագրված վճարով հարկման ենթակա գործունեություն է իրականացնում տարբեր վայրերում, ապա ինչ կարգով են ներկայացվում ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունները*

## **Պատասխան**

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն: Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ հաստատագրված վճարի հաշվարկը կատարվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (օբյեկտի), ավտոտրանսպորտային միջոցի համար և առանձին-առանձին ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հիման վրա, այլ ոչ թե հարկ վճարողի կողմից իրականացվող ամբողջ գործունեության արդյունքներով:

Ընդհանուր գործունեության արդյունքներով հաստատագրված վճարի հաշվարկը և ելակետային տվյալի վերաբերյալ հայտարարություններ ներկայացվում է միայն վիճակախաղի կազմակերպման համար:

## Հարց

*Հաստատագրված վճար վճարողների կողմից ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների պարտադիր ներկայացման ինչ ժամկետներ են սահմանված*

### Պատասխան

Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների պարտադիր ներկայացման ժամկետներ են.

- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար՝ յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան նախորդող ամսվա վերջին օրը ներառյալ,
- վիճակախաղի կազմակերպում գործունեության համար՝ յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ,
- ավտոտրանսպորտային գործունեության համար՝ յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա վերջին օրը ներառյալ,
- հաստատագրված վճարով հարկվող մյուս գործունեության տեսակների համար՝ հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում:

## Հարց

*Հաստատագրված վճար վճարողը ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացրել է միայն հունվար ամսվա համար: Հետագայում հաստատագրված վճար վճարողը փետրվար, մարտ և ապրիլ ամիսների համար նոր հայտարարություն չի ներկայացրել: Տվյալ դեպքում փետրվար, մարտ, ապրիլ ամիսների համար հաստատագրված վճար հաշվարկվում է թե ոչ:*

### Պատասխան

Քանի որ հաստատագրված վճար վճարողը փետրվար, մարտ, ապրիլ ամիսների համար գործունեության դադարեցման մասին դիմում ու ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն չի ներկայացրել, ապա տվյալ ամիսների համար հաստատագրված վճարը հաշվարկվում է հարկային տեսչության կողմից՝ կիրառելով հունվար ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունած ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները:

## **Հարց**

*Ինչ գործողություններ պետք է կատարի հաստատագրված վճար վճարողը, եթե դադարեցնում է իր գործունեությունը*

### **Պատասխան**

Գործունեության դադարեցման դեպքում հաստատագրված վճար վճարողը պարտավոր է իր հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացնել գործունեության դադարեցման մասին դիմում: Դիմումը պետք է ներկայացվի գրավոր և մինչև գործունեության դադարեցումը: Դիմումի մեջ պետք է նշվի գործունեության դադարեցման ժամկետի սկիզբը: Այդ ժամկետը չի կարող դիմումի ներկայացման օրվանից շուտ լինել:

## **Հարց**

*Եթե հաստատագրված վճար վճարողը ներկայացրել է գործունեության ժամանակավոր դադարեցման մասին դիմում, և այն իր մեջ ներառում է նաև ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների պարտադիր գրանցման ժամկետը, ապա հաստատագրված վճար վճարողը պարտավոր է այդ ժամկետում հարկային տեսչություն ներկայացնել հայտարարություն գրանցման համար*

### **Պատասխան**

Այն դեպքում, երբ հաստատագրված վճար վճարողը ներկայացրել է գործունեության ժամանակավոր դադարեցման մասին դիմում, և գործունեության դադարեցման մասին դիմումում նշված ժամանակահատվածը իր մեջ ներառում է նաև ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների պարտադիր գրանցման ժամկետը, ապա հաստատագրված վճար վճարողի կողմից ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության պարտադիր ներկայացման ժամկետ է համարվում գործունեության վերսկսման օրվան նախորդող օրը:

## **Հարց**

*Եթե հաստատագրված վճար վճարողը ներկայացրել է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն և հետագայում հարկային տեսչություն գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու մասին որևէ տեղեկություն գրավոր չի հայտնել հարկային տեսչություն, ապա հաստատագրված վճար հաշվարկվում է թե ոչ :*

## **Պատասխան**

Եթե հաստատագրված վճար վճարողը սահմանված կարգով իր հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացրել է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն և հետագայում չի ներկայացրել գրավոր դիմում-հայտարարություն գործունեության դադարեցման (այդ թվում՝ ժամանակավոր) կամ կասեցման մասին, ապա հաստատագրված վճարը հաշվարկվում է հարկային տեսչության մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

## **Հարց**

*Հաստատագրված վճարով հարկվող գործունեության որ տեսակների համար են սահմանված սահմանային չափեր.*

## **Պատասխան**

Սահմանային չափեր սահմանված են հետևյալ գործունեության տեսակների համար՝

- կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար (եռամսյակի ընթացքում առևտրական տարածքի 1մ<sup>2</sup> համար 310 հազար դրամ).
- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար (մեկ քառակուսի մետր հաշվով առևտրական գործունեություն իրականացնողից գանձվող վճարի մեծությունը վճարվող հաստատագրված վճարի մեծության 5-ապատիկ).
- հանրային սննդի գործունեության համար (եռամսյակի ընթացքում սպասարկման մակերեսի 1մ<sup>2</sup> հաշվով 200 հազար դրամ).
- ավտոտեխսպասարկման գործունեության համար (ամսվա ընթացքում մեկ աշխատատեղի համար 800 հազար դրամ):

Սահմանային չափերը գերազանցելու դեպքում (բացառությամբ առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության) սահմանային չափը գերազանցած ժամանակաշրջանի համար հաշվարկվում է ԱԱՀ և շահութահարկ (եկամտահարկ) սահմանված ընդհանուր կարգով՝ պակասեցնելով տվյալ ժամանակաշրջանի համար վճարված հաստատագրված վճարի գումարը: Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության համար՝ սահմանային չափը գերազանցած ամսվա համար հաստատագրված վճարի չափը կրկնապատկվում է:



Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ անկախ սահմանային չափը գերազանցելու հանգամանքից, հարկ վճարողները երբեք չեն դադարում համարվել հաստատագրված վճար վճարողներ:

Սահմանային չափերի վերաբերյալ հայտարարությունները ներկայացվում են յուրաքանչյուր ժամանակաշրջանի (համապատասխանաբար ամսվա կամ եռամսյակի) համար՝ տվյալ ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

### **Հարց**

***Ինչ հաշվառում են վարում հաստատագրված վճար վճարողները և ինչ հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմին***

#### **Պատասխան**

Հաստատագրված վճար վճարողները պետք է վարեն հաշվապահական հաշվառում՝ այդ ոլորտը կարգավորող օրենքով սահմանված կարգով: Հաստատագրված վճար վճարողները պարտավոր են վարել հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ: Մասնավորապես, համապատասխան դեպքերում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով պետք է վարեն հասույթների գրանցման, առաքումների գրանցման և դրամարկղային գրքեր:

Հաստատագրված վճար վճարողները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնում են հաշվապահական հաշվետվություններ, հարկային հաշվարկներ, հայտարարագրեր և հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ:

Եթե հաստատագրված վճար վճարողը իրականացնում է միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն ապա ավելացված արժեքի հարկի և շահութահարկի հաշվարկներ չեն ներկայացվում:

### **Հարց**

***Հաստատագրված վճար վճարողները կարող են դուրս գրել հարկային հաշիվ***

#### **Պատասխան**

Հաստատագրված վճար վճարողները հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր: Հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և ԱԱՀ-ի գումարի մասին նշումներ չպետք է կատարվի:

Հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում վճարողները պարտավոր են պետական բյուջե վճարել նաև ավելացված արժեքի հարկ՝ անկախ հաստատագրված վճարների կատարումից:

## **ԳՐՔԵՐԻ ՇԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԿԱՐՄԱՆ ԿԱՐԳԵՐ**

---

### **Հարց**

*Հարկ վճարողների կողմից վարվող որ գրքերը պարտադիր պետք է գրանցվեն (հաշվառվեն) ու կնքվեն հարկային տեսչություններում*

### **Պատասխան**

Հարկ վճարողները սահմանված կարգով պարտավոր են վարել

- արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման գիրք (հասույթների գրանցման գիրք),
- առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գիրք (առաքումների գրանցման գիրք),
- եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք, որը վարվում է պարզեցված հարկ վճարողների կողմից (պարզեցվածի գիրք),
- դրամարկղային գիրք:

Հարկ վճարողների կողմից վարվող վերոնշյալ գրքերը պետք է գրանցվեն (հաշվառվեն) և կնքվեն հարկային տեսչությունների կողմից: Այդ գրքերի ձևերը, վարման ու հարկային տեսչության կողմից գրանցման կարգերը սահմանված է ՀՀ կառավարության որոշումներով:

## **ՇԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳԻՐԸ**

### **Հարց**

*Ովքեր և որ դեպքերում պարտադիր պետք է վարեն հասույթի գրանցման գիրք*

### **Պատասխան**

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունե-

ության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունները, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, պարտավոր են վարել հասույթի գրանցման գիրք:

Ոչ նյութական ակտիվների, անշարժ գույքի, հրատարակվող թերթերի վաճառքի մասով հասույթների գրանցման գիրք չի վարվում:

Կազմակերպությունները հաշվապահական հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատերերը եկամուտների և դրանց հետ կապված ծախսերի հաշվառման կարգին զուգընթաց առևտրի իրականացման վայրում վարում են հասույթի գրանցման գիրք:

## **Հարց**

***Հարկային տեսչությունում հասույթի գրանցման գրքի հաշվառման կարգը***

### **Պատասխան**

Հասույթի գրանցման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո տնտեսավարող սուբյեկտն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն է ներկայացնում գրավոր հայտ հասույթի գրանցման գրքի կնքման և համարակալման համար: Հայտում նշվում է կազմակերպության անվանումը, կազմակերպատիրավական տեսակը, ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայրը (հասցեն), համապատասխան նշում կատարելով նաև այդ հասցեով նախկինում հասույթի գրանցման գիրք ստացած լինելու կամ չլինելու մասին, ստացած լինելու դեպքում ներկայացնելով նաև լրացված-ավարտված գիրքը: Հայտին կից ներկայացվում է այդ հասցեի առկայությունը հիմնավորող իրավասու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքը:

Հարկային տեսչությունը հայտը ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում և համարակալում է հասույթի գրանցման գիրքը՝ դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնաստճավող դրոշմանիշ: Կնքված և համարակալված հասույթի գրանցման գրքերը հերթական համարներով հաշվառվում են հարկային տեսչությունում:

## **Հարց**

***Ինչ տեղեկություններ պետք է նշվեն հասույթի գրանցման գրքի կազմի վրա.***

### **Պատասխան**

Հասույթի գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու (բնակության) վայրը և գրքի հերթական համարը: Առևտրի իրականացման վայրի (կետի) հասցեն տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (բնակության) վայրից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի (կետի) հասցեն:

Ընդ որում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման յուրաքանչյուր վայրի (կետի) համար վարվում է առանձին հասույթի գրանցման գիրք:

## **Հարց**

***Որտեղ պետք է պահվի հասույթի գրանցման գիրքը***

### **Պատասխան**

Ապրանքների, արտադրանքի վաճառքի իրականացման ժամանակ հասույթի գրանցման գիրքը պետք է պահվի առևտրի իրականացման վայրում (կետում), որտեղ իրականացվում է ապրանքների, արտադրանքի անմիջական ցուցադրությունն ու վաճառքը:

## **Հարց**

***Հարկ վճարողի կողմից նոր հասույթի գրանցման գրքի վարման հետ կապված որոշ առանձնահատկություններ***

### **Պատասխան**

Հասույթի գրանցման գրքի լրանալուց-ավարտվելուց հետո տնտեսավարող սուբյեկտը վերոնշված կարգով նոր գրանցման գիրք է ներկայացնում հարկային տեսչություն՝ կնքման և համարակալման համար:

Լրացված-ավարտված գրքում գրանցված, սակայն չիրացված (չվաճառված) արտադրանքի, ապրանքների մնացորդը հարկային մարմնի կողմից նոր կնքված ու համարակալված հասույթի գրանցման գրքում գրանցվում է միայն գնային փոփոխությամբ պայմանավորված նոր տողից գրանցման դեպքերի:

Մինչև հասույթի գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը կարող է նոր հասույթի գրանցման գիրք՝ ներկայացնել հար-

կային տեսչություն՝ կնքման և համարակալման: Ընդ որում, այդ դեպքում նոր հասույթի գրանցման գրքում գրանցումներ կարող են կատարվել միայն հարկային տեսչություն ներկայացված՝ նախկին հասույթի գրանցման գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային տեսչության կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելու և կնքվելուց հետո:

## **Հարց**

*Հասույթի գրանցման գրքերում վաճառվող ապրանքների և դրանց գների գրանցման կարգը*

### **Պատասխան**

Անկախ առևտրի իրականացման ձևից (մեծածախ կամ մանրածախ) հասույթի գրանցման գրքերում գրանցվում (հաշվառման) են ձեռք բերված, սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված բոլոր ապրանքները: Այդ ապրանքները հասույթի գրանցման գրքում գրանցվում են դրանք ստանալուց (ընդունելուց) անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը, բայց ոչ ուշ քան մինչև ապրանքները ստանալու օրվա ավարտը:

Տնտեսավարող սուբյեկտներն աշխատանքի ընթացքում (վաճառք իրականացնելիս) պարտավոր են հասույթի գրանցման գիրքը պահել առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրում (կետում):

Հասույթի գրանցման գրքում հերթական համարով նշվում են ապրանքի ստացման ամսաթիվը, մուտքի փաստաթղթի տվյալները (համարը, ամսաթիվը և ընդհանուր գումարը), ապրանքի անվանումը, չափի միավորը, քանակը, միավորի վաճառքի գինը (փոփոխությունները):

Գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը եւ անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրանցումը: Ձեռված տողի կողքին կատարվում համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:

## **Հարց**

*Գնային փոփոխությունների դեպքում ինչպես են կատարվում գրանցումները հասույթի գրանցման գրքում*

### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքների գների առաջին և երկրորդ փոփոխման դեպքում լրացվում են հասույթի գրանցման

գրքի «Վաճառքի գների գրանցում» մասի համապատասխան սյունակները՝ գների փոփոխման ամսաթիվը, մնացորդը, նոր գինը: Ապրանքների գների երրորդ փոփոխության դեպքում հասույթի գրանցման գրքում լրացվում է նոր տող հերթական համարով՝ փակագծում նշելով այդ ապրանքի առաջին (նախորդ) գրանցման տողի հերթական համարը: Ընդ որում այդ դեպքում, գրանցումները կատարվում են՝

- հերթական համարի սյունակում,
- «Ապրանքի ստացման ամսաթիվը» սյունակում՝ նշելով նոր գնով վաճառքը սկսելու ամսաթիվը,
- «Ապրանքի անվանումը», «Չափի միավորը», «Քանակը» սյունակում,
- «Միավորի վաճառքի գինը (դրամով)» սյունակում՝ ապրանքի վաճառքի նոր գինը:

Հասույթի գրանցման գրքում գրանցված գներից տարբերվող վաճառքի այլ գների գրանցում չի կատարվում, եթե համապատասխան կարգով հաշվառվող փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, գնման ակտ և այլն) հիմնավորվում է ապրանքների այլ գներով իրացումը:

## **Հարց**

***Երբ և ինչ կարգով է ապրանքի, արտադրանքի վաճառքից ստացված հասույթը գրանցվում հասույթի գրանցման գրքում***

## **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտները աշխատանքային օրվա վերջում յուրաքանչյուր օրվա արդյունքներով հասույթի գրանցման գրքերում գրանցում են կանխիկ ստացված փաստացի հասույթը: Հասույթները գրանցվում են «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մեկ տարվա համար նախատեսված մասում, ըստ ամսաթվերի:

Օրական հասույթների գրանցում (հաշվառում) մասը լրանալուց-ավարտվելուց հետո տնտեսավարող սուբյեկտներին կարող է տրվել հարկային տեսչության կողմից կնքված «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մասի նոր էջեր հաջորդ մեկ տարվա համար:

Եթե տնտեսավարող սուբյեկտները սահմանված կարգով կիրառում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, ապա հասույթի գրանցման գրքի «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մասի լրացումը պարտադիր չէ:

## **Հարց**

*Ինչ է իր մեջ ներառում հասույթի գրանցման գրքում գրանցումների կատարումը, որոնք չկատարելու դեպքում կիրառվում է օրենքով սահմանված պատասխանատվություն*

### **Պատասխան**

Հասույթի գրանցման գրքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների գրանցումը ներառում է, մասնավորապես.

ա) հասույթի գրանցման գրքի՝ ապրանքների (և դրանց գների) գրանցման մասի էջի

- «Ապրանքի անվանումը», «Չափի միավորը», «Քանակը» սյունակների լրացումը (համապատասխան քանակի ըստ էության գրանցումը).
- «Միավորի վաճառքի գինը (դրամով)» սյունակի լրացումը, ինչպես նաև գների փոփոխության դեպքում՝ սահմանված կարգով գրանցումների կատարումը:

բ) գրանցման գրքի օրական հասույթների գրանցման մասի լրացումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են հսկիչ-դրամարկդային մեքենաներ:

Նշված պահանջները չպահպանելը առաջացնում է պատասխանատվություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով:

## **ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳԻՐԸ**

### **Հարց**

*Ովքեր և որ դեպքերում պարտադիր պետք է վարեն առաքումների գրանցման գիրք*

### **Պատասխան**

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող կամ տեղափոխող կազմակերպությունները, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ՀՀ-ում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, պարտավոր են վարել առաքումների գրանցման գիրք:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են իրենց կողմից առաքվող կամ իրենց մոտից տեղափոխվող ամբողջ արտադրանքը և ապրանքները, եթե այդ մասով առաքումների գրանցման գրքի վարումը պարտադիր է: Ապրանքների առաքումը կամ տեղափոխումը իրականացվում է սահմանված կարգով լրացվող սկզբնական հաշվարկային փաստաթղթերի՝ ապրանքա-տրանսպորտային բեռնագիր, պահեստի ելքի անդորրագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն, հիման վրա:

Կազմակերպությունները հաշվապահական հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատերերը եկամուտների և դրանց հետ կապված ծախսերի հաշվառման կարգին գույքնօրհան շարժական (նյութական) գույք հանդիսացող արտադրանքի (ապրանքների) առաքման կամ տրամադրման կամ տեղափոխման դեպքում պարտավոր են սահմանված կարգով վարել դրանց հաշվառումը, գրանցումներ կատարելով առաքումների գրանցման գրքում:

## **Հարց**

*Որ դեպքերում ձեռնարկատիրական գործունեության առարկաների (արտադրանքի, ապրանքների) առաքումը կամ տեղափոխումը չի գրանցվում առաքումների գրքում*

## **Պատասխան**

Առաքումների գրանցման գրքում չի գրանցվում

- պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը,
- խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը,
- տարածման նպատակով մամուլի տեղափոխումը,
- վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը,
- տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:



## **Հարց**

### **Հարկային տեսչությունում հասույթի գրանցման գրքի հաշվառման կարգը**

#### **Պատասխան**

Առաքումների գրանցման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո տնտեսավարող սուբյեկտն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում գրավոր հայտ՝ սահմանված ձևին համապատասխան, առաքումների գրանցման գրքի կնքման և համարակալման համար: Հայտում նշվում է կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, հասցեն, համապատասխան նշում կատարելով նաև այդ հասցեով նախկինում առաքումների գրանցման գիրք ստացած լինելու կամ չլինելու մասին, ստացած լինելու դեպքում ներկայացնելով նաև լրացված-ավարտված գիրքը: Հայտին կից ներկայացվում է տվյալ հասցեի առկայությունը հիմնավորող իրավասու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքը:

Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում ու համարակալում է առաքումների գրանցման գիրքը՝ դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնաստանձվող դրոշմանիշ:

Տնտեսավարող սուբյեկտները նույն կարգով նոր առաքումների գրանցման գիրք է ներկայացնում հարկային տեսչություն՝ կնքման և համարակալման առաքումների գրանցման գրքի լրանալուց-ավարտվելուց հետո: Իսկ եթե մինչև առաքումների գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը հարկային տեսչություն է ներկայացնում նոր առաքումների գրանցման գիրք՝ կնքման և համարակալման համար, ապա նոր առաքումների գրանցման գրքում գրանցումներ կարող են կատարվել միայն նախկին առաքումների գրանցման գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային մարմնի կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելուց և կնքվելուց հետո:

Կնքված և համարակալված առաքումների գրանցման գրքերը խիստ հաշվառման փաստաթղթեր են և հերթական համարներով հաշվառվում են հարկային մարմնում:

## **Հարց**

*Յուրաքանչյուր հասցեից իրականացվող առաքումների և(կամ) տեղափոխումների դեպքում վարվում է առանձին առաքումների գիրք, թե ոչ*

### **Պատասխան**

Առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի), ինչպես նաև նույն հասցեի (դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա) համար վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք:

Առաքումների գրանցման գիրքը տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են աշխատանքի (առաքումների իրականացման) ընթացքում պահել ապրանքի անմիջական առաքման (բացթողման) կետում (շինությունում, վայրում):

## **Հարց**

*Ինչ տեղեկություններ պետք է նշվեն առաքումների գրանցման գրքի կազմի վրա.*

### **Պատասխան**

Առաքումների գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու (բնակության) վայրը և առաքումների գրանցման գրքի հերթական համարը: Առաքումների իրականացման վայրի (կետի) հասցեն տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (բնակության) վայրից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի (կետի) հասցեն:

## **Հարց**

*Որ ապրանքն է համարվում առաքվող և ինչ կարգով է կատարվում առաքումների գրանցումը*

### **Պատասխան**

Առաքվող ապրանք է համարվում՝

- տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացնելու համար նախատեսված ապրանքը (այդ թվում՝ կոմիսիոն վաճառքի ձևով և այլն),

- իրացման համար չնախատեսված ապրանքների (պատրաստի արտադրանքի) տրամադրումը (հատկացումը, բայ թողումը, այլ ձևով օտարումը, այդ թվում՝ անհատույց),
- առևտրական կետից տնտեսավարող սուբյեկտներին իրացվող (վաճառվող, տրամադրվող) ապրանքը:

Ապրանքների առաքման դեպքում առաքումների գրանցման գրքում գրանցումներ կատարվում են նախապես՝ մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը (տեղափոխման սկիզբը), յուրաքանչյուր հաշվարկային փաստաթղթի համար առանձին-առանձին՝ ըստ առաքման կամ տեղափոխման համար հաշվարկային փաստաթղթերի լրացման հաջորդականության, գրանցման հերթական համարներով:

Առաքումների գրանցման գրքում առաքումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից հերթական համարով գրանցվում է առաքվող ապրանքատեսակի խոշորացված խմբի անվանումը (օրինակ. սննդամթերք, շինանյութ և այլն), հաշվարկային փաստաթղթի տվյալները, տվյալ տարածքից տեղափոխման ձևը (տրանսպորտային միջոցի տեսակը, մակնիշը, պետհամարանիշը (համարը) կամ նշում առձեռն (առանց տրանսպորտային միջոցի) տեղափոխման մասին և ապրանքի հասցեագրման (տեղափոխման) վայրը:

Առաքումների գրանցման գրքում գրանցում կատարելուց հետո գնորդին (ստացողին) տրվող հաշվարկային փաստաթղթի վերևի աջ անկյունում կատարվում է «Առաքողի գրանցման գրքի N \_\_\_\_» գրառումը և գրառման մեջ համարի համար նախատեսված մասում լրացվում է առաքողի առաքումների գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տողի հերթական համարը

## **Հարց**

***Առաքումների գրանցման գրքի վարման կարգի որ պահանջները չպահպանելու դեպքում է համարվում առաքվող ապրանքը չգրանցված***

## **Պատասխան**

Առաքվող ապրանքը համարվում է չգրանցված առաքումների գրանցման գրքում, եթե չեն ապահովվել հետևյալ պահանջները՝

- չեն լրացվել առաքումների գրանցման գրքի գրանցման էջի «Հերթական համարը», «Ապրանքատեսակի խմբի անվանումը», «Հաշիվ-ապրանքագրի համարը, ամսաթիվը», «Ընդհանուր

գումարը՝ ներառյալ ԱԱՀ (դրամով)», «Գնորդի (ստացողի) անվանումը և ՀՎՀՀ-ն» սյունակները,

- չեն կատարվել առաքումների գրանցման գրքի ներկայացվող պահանջները և հարկային տեսչությունում գրանցման կարգը,
- ապրանքների առաքումը չի իրականացվել սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա
- գնորդին տրվող հաշվարկային փաստաթղթի վրա չեն նշվել «Առաքողի գրանցման գրքի N \_\_\_\_» գրառումը և առաքողի առաքումների գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տողի հերթական համարը
- առաքումների գրանցման գիրքը առաքումների ընթացքում չի գտնվել ապրանքի անմիջական առաքման (բացթողման) կետում:

## **Հարց**

*Որ ապրանքն է համարվում տեղափոխվող և տեղափոխումների դեպքում ինչ գրանցումներ են կատարվում առաքումների գրանցման գրքում*

### **Պատասխան**

Տեղափոխվող ապրանք է համարվում

- տնտեսական տեղաշարժերի ենթարկվող (պատրաստի արտադրանքի պահեստից կամ այլ վայրերից ֆիրմային խանութ, պահեստից վաճառքի կետ կամ այլ վայր (պահեստ և այլն), տեղափոխվող) ապրանքը (պատրաստի արտադրանքը),
- մաքսատուն կամ մաքսային կետ տեղափոխվող կամ ի պահ հանձնվող ապրանքը:

Ապրանքների տեղափոխման դեպքում առաքումների գրանցման գրքում գրանցումներ նույնպես կատարվում են նախապես՝ մինչև ապրանքի տեղափոխումը, յուրաքանչյուր հաշվարկային փաստաթղթի համար առանձին-առանձին՝ ըստ առաքման կամ տեղափոխման համար հաշվարկային փաստաթղթի լրացման հաջորդականության, գրանցման հերթական համարներով:

Առաքումների գրանցման գրքում գրանցում կատարելուց հետո տեղափոխման հաշվարկային փաստաթղթի վերևի աջ անկյունում կատարվում է «Առաքողի գրանցման գրքի N \_\_\_\_» գրառումը և գրառման մեջ համարի համար նախատեսված մասում լրացվում է առաքումների գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տո-

դի հերթական համարը: Տեղափոխվող ապրանքների հետ պետք է լինի նշված հաշվարկային փաստաթուղթը, իսկ ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար, եթե ապրանքը գտնվում է մաքսագերծման վայրերից դեպի առաջին նշանակման կետ ճանապարհին, մաքսային համապատասխան փաստաթղթեր (փոխադրման ամփոփագիր և (կամ) մաքսային հայտարարագիր): Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ապրանքների տեղափոխման դեպքում ապրանքներ տեղափոխողի մոտ առկա հաշվարկային փաստաթղթում տեղափոխման ձևի և վայրի մասին կատարված նշումը պետք է համընկնի առաքողի տնտեսավարող սուբյեկտի առաքումների գրանցման գրքի համապատասխան տողի «Տեղափոխման ձևը և վայրը (հասցեն)» սյունակում կատարված նշման հետ:

### **Հարց**

***Ինչ է ներառում առաքումների գրանցման գրքում ապրանքների տեղափոխման գրանցումը***

#### **Պատասխան**

Տեղափոխվող ապրանքների գրանցումը առաքումների գրանցման գրքում ներառում է.

- առաքող տնտեսավարող սուբյեկտի համար առաքումների գրանցման գրքի գրանցման էջի «Հերթական համարը», «Ապրանքատեսակի խմբի անվանումը», «Հաշիվ-ապրանքագրի համարը, ամսաթիվը», «Գ-նորդի (ստացողի) անվանումը և ՀՎՀՀ-ն», «Առաքման (ապրանքը բաց թողնելու, տեղափոխման սկզբի) օրը, ժամը», «Տեղափոխման ձևը և վայրը (հասցեն)», «Ապրանքն ուղեկցողի (ստացողի) անունը, ազգանունը, լիազորագրի համարը (անձնագրի տվյալները)» սյունակների լրացումը,
- տեղափոխող տրանսպորտային կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) համար տեղափոխվող ապրանքների համար սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթղթի առկայությունը:

### **Հարց**

***Առաքված ապրանքների հետ վերադարձի դեպքում առաքման գրքում ուղղումներ (գրանցումներ) կատարվում են, թե ոչ***

#### **Պատասխան**

Առաքված ապրանքները հետ վերադարձնելու դեպքում առաքումների գրանցման գրքում ուղղումներ (գրանցումներ) չեն կատարվում է:

Այդ ապրանքների հետ վերադարձը ձևակերպվում և գրանցվում է հաշվապահական հաշվառման գործող կարգին համապատասխան:

### **Հարց**

*Առաքումների գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում ինչ կարգով է կատարվում ճիշտ գրառումը*

### **Պատասխան**

Առաքումների գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրառումը: Ձեռված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:

## **ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ԳԻՐՔ**

### **Հարց**

*Ովքեր են պարտավոր վարել դրամարկղային գրքեր*

### **Պատասխան**

Դրամարկղային գրքեր պարտադիր պետք է վարեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձինք պետական և այլ հիմնարկները, դրանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), բացառությամբ՝ բանկերի և դրանց առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների:

Անհատ ձեռնարկատերերը դրամարկղային գրքեր չեն վարում:

## **Հարց**

***Ինչ կարգով է դրամարկղային գրքերը կնքվում հարկային մարմնի կողմից***

### **Պատասխան**

Կազմակերպությունների կողմից վարվող դրամարկղային գրքերի թերթերը համարակալվում են ու թելկարվում, որից հետո ներկայացվում է հարկային տեսչություն: հարկային տեսչությունը կնքում և համարակալում է դրամարկղային գրքերը:

Կազմակերպությունները իրենց կողմից օգտագործվող յուրաքանչյուր արժույթի համար վարում է առանձին դրամարկղային գիրք:

## **Հարց**

***Դրամարկղային գրքերի վարման կանոնները***

### **Պատասխան**

Դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկագրով կանխիկ դրամ վճարելիս՝ դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է դրամարկղային ելքի օրդերի կազմման օրը: Այդ դեպքում ելքի կազմման օր է համարվում տեղեկագրով նախատեսված բոլոր վճարումներն ավարտելու կամ տեղեկագրի վրա նշված վճարման ժամկետը լրանալու օրը, իսկ եթե ժամկետը չի լրացել՝ ամսվա վերջին օրը: Դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը կատարվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, ոչ ուշ, քան ամսվա վերջին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Գանձապահը եզրափակելիս հաշվում և գրանցում է բոլոր մուտքագրված և ելքագրված գումարների հանրագումարները, ինչպես նաև եզրափակման օրվա վերջի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ դրամի մնացորդը: Գանձապահը դրամարկղային գրքի եզրափակված թերթի կտրվող մասը՝ մուտքի ու ելքի օրդերների և դրանց կից փաստաթղթերի հետ միասին, որպես գանձապահի հաշվետվություն, հանձնում է հաշվապահություն, որի դիմաց ընդունող հաշվապահն ստորագրում է դրամարկղային գրքում:

Գանձապահը դրամարկղային գրքում գրանցումները կատարում է գրչով, պատճենահան թղթի օգնությամբ՝ 2 օրինակից: Դրամարկղային

գրքում չի թույլատրվում կատարել ջնջումներ և առանց ծանոթագրության ուղղումներ: Ուղղումների մասին ծանոթագրության կատարման համար անհրաժեշտ է սխալ կատարված գրանցման վրա գիծ քաշել՝ այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և կատարել նոր գրառում: Կատարված ուղղումները վավերացվում են գանձապահի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ՝ նշելով ուղղումը կատարելու ամսաթիվը:

Դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը կատարվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, ոչ ուշ, քան ամսվա վերջին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Գանձապահը եզրափակելիս հաշվում և գրանցում է բոլոր մուտքագրված և ելքագրված գումարների հանրագումարները, ինչպես նաև եզրափակման օրվա վերջի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ դրամի մնացորդը: Գանձապահը դրամարկղային գրքի եզրափակված թերթի կտրվող մասը՝ մուտքի ու ելքի օրդերների և դրանց կից փաստաթղթերի հետ միասին, որպես գանձապահի հաշվետվություն, հանձնում է հաշվապահության, որի դիմաց ընդունող հաշվապահն ստորագրում է դրամարկղային գրքում:

## **ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

---

### **Հարց**

*Ինչպես է կատարվում կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպության դրամարկղ ու ելքագրումը կազմակերպության դրամարկղից:*

### **Պատասխան**

Կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրումը (ընդունումը) կատարվում է դրամարկղային մուտքի օրդերի հիման վրա, իսկ կազմակերպության դրամարկղից կանխիկ դրամի ելքագրումը (վճարումը)՝ դրամարկղային ելքի օրդերով:

Կազմակերպության մեկից ավելի անձանց մեկ միասնական փաստաթղթով կազմակերպության դրամարկղից կանխիկ դրամով վճարումների (աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, դրանց հավասարեցված վճարներ, նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակ-



ներ և այլ վճարներ) իրականացման դեպքում կազմվում է վճարային տեղեկագիր: Տեղեկագրով կատարված բոլոր վճարումների հանրագումարով՝ վճարումների դադարեցման օրը կազմվում է ելքի մեկ օրդեր: Առանձին անձանց աշխատավարձ և այլ վճարներ կարող են վճարվել նաև առանձին ելքի օրդերով:

Մուտքի և ելքի օրդերները լրացվում են ձեռագիր (գրչով) կամ տպագիր: Մուտքի և ելքի օրդերները համարակալվում են առանձին, այսինքն՝ մուտքի օրդերները համարակալվում են առանձին հերթակալությամբ, իսկ ելքի օրդերները՝ առանձին: Համարակալումները վերսկսվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Մուտքի և ելքի օրդերներում սխալների ուղղում կատարել չի թույլատրվում:

Կանխիկ դրամի բոլոր մուտքագրումները և ելքագրումները գրանցվում են դրամարկղային գրքում մուտքի և ելքի օրդերների հիման վրա:

## **Հարց**

***Գանձապահի պարտականությունները դրամարկղային գործառնությունների իրականացման ժամանակ***

### **Պատասխան**

Գանձապահը կազմակերպության աշխատակիցն է, որն իրականացնում է կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպության դրամարկղ և ելքագրումը կազմակերպության դրամարկղից:

Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ մինչև 3 աշխատակից ունեցող կազմակերպությունների:

Գանձապահի պարտականությունների կատարումը կարող է փոխանցվել կազմակերպության այլ աշխատակցի միայն կազմակերպության ղեկավարի հրամանի (որոշման) հիման վրա:

## **Հարց**

***Դրամարկղային գործառնությունների իրականացման դեպքում կանխիկ դրամով վճարումների համար ինչ սահմանափակումներ են սահմանված***

### **Պատասխան**

Դրամարկղային գործառնությունների իրականացման համար սահմանափակումներ սահմանված են հետևյալ դեպքերում՝

ա) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարումների համար, այն չի կարող գերազանցել 300 հազար դրամը.

բ) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարումների համար, այն չի կարող գերազանցել 3 մլն դրամը:

Վերոնշյալ սահմանափակումների կիրառման իմաստով կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները՝ ներառյալ կանխավճարները, առհաշիվ տրված կանխիկ դրամի հաշվին կատարվող վճարումները:

## **Հարց**

*Որ դեպքերում չեն կիրառվում կանխիկ դրամով վճարումների համար սահմանված սահմանափակումները*

### **Պատասխան**

Կանխիկ դրամով վճարումների համար սահմանված սահմանափակումները չեն տարածվում՝

- աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների և այլ համանման վճարումների,
- գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումների,
- ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների,
- ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությունը մատուցված ծառայությունների և կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումների,
- ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների,
- գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումների,

- ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարումների, ինչպես նաև կառավարության սահմանած դեպքերում անհետաձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում կատարվող վճարումների վրա:

### **Հարց.**

*«Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումների կիրառման առումով համարվում է արդյոք կանխիկ դրամով վճարում, եթե ձեռք բերված ապրանքների (ծառայությունների) դիմաց գնորդը վճարումը կատարել է կանխիկ դրամը բանկում մատակարարի բանկային հաշվին մուտքագրելու միջոցով.*

### **Պատասխան.**

Եթե ձեռք բերված ապրանքների (ծառայությունների) դիմաց գնորդը վճարումը կատարել է կանխիկ դրամը բանկում մատակարարի բանկային հաշվին մուտքագրելու միջոցով, ապա «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կանխիկ դրամով վճարումների սահմանափակումների կիրառման համար այն չի համարվում կանխիկ դրամով վճարում:

### **Հարց**

*Կազմակերպության բանկային հաշիվ և կազմակերպության դրամարկղ կանխիկ գումարների մուտքագրման ժամկետային ինչ սահմանափակումներ են գործում*

### **Պատասխան**

Եթե բանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, ապա մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը բանկային հաշվից հանելու հաջորդ օրը:

Կազմակերպության դրամարկղից ելքագրված կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպության բանկային հաշիվներ պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը դրամարկղից հանելու հաջորդ օրը:

## **Հարց**

### ***Առհաշիվ տրված գումարների նկատմամբ կիրառվող ժամկետային սահմանափակումները***

#### **Պատասխան**

Կազմակերպությունների կողմից գործուղման, ինչպես նաև գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ սահմանվում են հետևյալ ժամկետային սահմանափակումները՝

- ա)** գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ դրամը հաշվետու անձի կողմից պետք է ծախսվի ըստ նպատակի կամ վերադարձվի կազմակերպության դրամարկղ, կամ բանկային հաշիվ՝ կանխիկ դրամը հաշվետու անձին տրամադրվելուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում, իսկ այդ ժամկետը լրանալու պահին աշխատողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու դեպքում՝ աշխատանքի վերադառնալուց հետո 3 օրվա ընթացքում.
- բ)** գործուղման նպատակով տրված կանխիկ դրամի՝ ըստ նպատակի չծախսված մասը պետք է կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձվի գործուղման ավարտից հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, իսկ այդ ժամկետը լրանալու պահին աշխատողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու դեպքում՝ աշխատանքի վերադառնալուց հետո 3 օրվա ընթացքում:

Առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատողների թիվը չի գերազանցում երկուսը:

Գործուղում է համարվում կազմակերպության ղեկավարի հրամանով կազմակերպության աշխատողի կամ կազմակերպության կառավարման մարմիններում ներգրավված այլ անձի՝ կազմակերպության որևէ հանճարարություն կատարելու նպատակով աշխատանքի մշտական վայրից (բնակավայրից) դուրս որոշակի ժամկետով այլ վայր (քաղաք, գյուղ և այլն) մեկնելը:

Գործուղումից տարբեր, ինչպես նաև գործուղման նպատակով տրվող առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ հաշվետու անձը հաշվապահություն է ներկայացնում առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն նշված ժամկետներում:

# **ՀԱԿԻՉ-ՊՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ**

---

## **Հարց**

***Որ դեպքերում պետք է կիրառվեն հսկիչ-դրամարկղային մեքենաներ Պատասխան***

ՀՀ տարածքում հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառվում է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մանրածախ վաճառք իրականացնելիս և բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող հաշվարկների դեպքում:

ՀԳՄ-ների պարտադիր կիրառման ոլորտները սահմանվում է օրենքով:

## **Հարց**

***Ինչ կանոններ են սահմանված ՀՀ-ում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար***

## **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաները պետք է գրանցված և կապարակնքված լինեն հարկային մարմնի կողմից: ՀՀ-ում կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաները պետք է ապահովեն դրամական միջոցների պատշաճ հաշվառումը՝ վերահսկողական ժապավենի և ֆիսկալային հիշողության ֆիքսումը:

Հսկիչ-դրամարկղային մեքենաները պետք է բավարարեն ՀՀ կառավարության կողմից սահմանված տեխնիկական պահանջներին:

## **Հարց**

***Ինչ կարգով է գրանցվում հսկիչ-դրամարկղային մեքենաները հարկային տեսչությունում***

## **Պատասխան**

Գործունեության առանձին ոլորտներում պարտադիր կիրառման ենթակա հսկիչ-դրամարկղային մեքենաները, մինչև դրանց կիրառելը (շահագործելը), պետք է գրանցվեն համապատասխան հարկային տեսչություններում : Դրա համար տնտեսավարող սուբյեկտները իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում դիմում՝ իրենց կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցելու մասին:

Դիմումին կից ներկայացվում են հսկիչ-դրամարկղային մեքենայի անձնագիրը, տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի հետ կնքված հսկիչ-դրամարկղային մեքենայի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագրի պատճենը, եթե այդպիսի պայմանագիր կնքվել է մինչև հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցումը : Շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտուր իրականացնելու դեպքում՝ դիմումի հետ ներկայացվում է նաև այդ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված առևտրի իրականացման թույլտվության պատճենները: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցումից հետո տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի հետ կնքված պայմանագրերի, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված առևտրի իրականացման նոր թույլտվության պատճենները ևս պետք է ներկայացվեն հարկային տեսչության:

Հարկային տեսչությունը բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո, ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցում: Հարկային տեսչությունը հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցելուց հետո այն կապարակնքում է հարկային տեսչության կլոր կնիքով՝ 2 տեղից (հանդիպակաց) : Կապարակնքված հսկիչ-դրամարկղային մեքենան վերադարձվում է տնտեսավարող սուբյեկտին տալով հարկային տեսչությունում հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի մեկ օրինակը:

Հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման մասին դիմումի և հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի ձևերը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ:

## **Հարց**

*Ապրանքների դիմաց կամ մատուցված ծառայության համար կանխիկ դրամով վճարումներ կատարելիս գնորդին կամ ծառայություն ստացողին հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն երբ է տրվում*

## **Պատասխան**

Չեռեքրերվող ապրանքների դիմաց կանխիկ դրամով վճարում կատարելու դեպքում գումարը ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին տրվում է հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնը : Ծառայությունների մատուցման դեպքում՝ ծառայություն ստացողին կտրոնը տրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում կատարելու պահին պահին:

## **Հարց**

*Եթե տնտեսավարող սուբյեկտը տրանսպորտային միջոցներով իրականացնում է առաքումներ՝ այլ տնտեսավարող սուբյեկտներին առաքելով (տրանսպորտով) ապրանք (արտադրանք), ապա տվյալ դեպքում պետք է կիրառվի հսկիչ-դրամարկղային մեքենա*

### **Պատասխան**

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է ՀՀ տարածքում օրենքով սահմանված ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների կողմից մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է նաև եթե վերգետնյա տրանսպորտային միջոցներով (ավտոկրպակներ, մոտոկրպակներ, ավտոսայլակներ, մոտոսայլակներ, կցորդներ, կիսակցորդներ և համանման այլ շարժական կետեր) իրականացվում է մանրածախ առևտուր: Վերգետնյա տրանսպորտային միջոցներով որոշ ապրանքատեսակների՝ գյուղատնտեսական արտադրանքի, թերթերի, ամսագրերի, լյուովի գարեջրի, կվասի, կաթի, թանի, կերոսինի, բենզինի և/կամ դիզելային վառելիքի, հեղուկ գազի վաճառքի մասով հսկիչ-դրամարկղային մեքենա չի կիրառվում:

Հետևաբար, ստացվում է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից տրանսպորտային միջոցներով այլ տնտեսավարող սուբյեկտներին ապրանքների (արտադրանքների) առաքումների դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

## **Հարց**

*Եթե մանրածախ վաճառքի կամ բնակչությանը ծառայությունների մատուցման ժամանակ վճարումը կատարվում է բանկային քարտերի միջոցով, ապա տվյալ դեպքում գնորդին կամ ծառայություն ստացողին պետք է տրանսպորտի կտրոն*

### **Պատասխան**

Քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում, ապա մանրածախ վաճառքի կամ ծառայությունների մատուցման ժամանակ բանկային քարտերի միջոցով վճարումներ կատարելիս գնորդին (ծառայություն ստացողին) հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն չի տրվում:

# ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

---

## Հարց

*Տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական հսկողությունը*

### Պատասխան

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական հսկողությունը իրականացվում է ստուգումների, ուսումնասիրությունների ձևով: Հայաստանի հանրապետությունում սահմանված է ՀՀ-ում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և ՀՀ տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում, անհատ ձեռնարկատերերի գործունեության ստուգումների իրականացման միասնական կարգ:

Ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և տնտեսավարող սուբյեկտի ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է:

## Հարց

*Ովքեր կարող են իրականացնել ստուգումներ*

### Պատասխան

Ստուգում իրականացնող պետական մարմիններն ստուգումներ իրականացնում են միայն Հայաստանի Հանրապետության օրենքներ-



րով և դրանց հիման վրա իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Ստուգումներ իրականացնող պետական մարմինները սահմանված են օրենքով:

### **Հարց**

***Հարկային մարմինների կողմից իրականացվող պետական հսկողությունը***

#### **Պատասխան**

Հարկային մարմինները պետական հսկողությունը իրականացնում են՝

- ստուգման,
- ուսումնասիրության,
- կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության ձևով:

### **Հարց**

***Հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգման էությունը***

#### **Պատասխան**

Հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգմամբ պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային, պարտադիր սուբյեկտի պահովագրության, բնօգտագործման, բնապահպանական և այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումները, գործունեության առանձին տեսակի իրականացման լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեության ստուգումները, արժութային գործառնությունների ստուգումները համարվում են թեմատիկ ստուգումներ:

Հարկային մարմնի կողմից իրականացվում են նաև ուսումնասիրություններ, մասնավորապես, որևէ հարկային կամ պարտադիր սուբյեկտի պահովագրության վճարների պարտավորությունից ավելի վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և(կամ) վերա-

դարձի, հսկիչ գնումների իրականացման: Հարկային մարմնի կողմից իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում լրացուցիչ հարկային կամ պարտադիր սուբսիդիական ապահովագրության վճարների պարտավորություններ չեն առաջադրվում:

## **Հարց**

***Կամերալ ուսումնասիրության իրականացման կարգը***

### **Պատասխան**

Հարկային մարմինները իրականացնում են տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմին ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի, ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունների և օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների կամերալ (գրասենյակային) ուսումնասիրություններ:

Կամերալ ուսումնասիրության նպատակն է պարզել հարկերի հաշվարկման ճշտությունը, միևնույն հաշվետվության ցուցանիշների, տվյալների և թվաբանական հաշվարկների ճշտությունը, տարբեր հաշվետվություններում առկա համադրելի ցուցանիշների կամ տեղեկությունների համապատասխանությունը, հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների և տեղեկությունների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմիններից ստացված տեղեկությունների հետ:

Կամերալ ուսումնասիրությունն իրականացվում է հարկային մարմնի գրասենյակում՝ առանց տնտեսավարող սուբյեկտին այցելության և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի և առանց հրամանի (հանձնարարագրի):

Կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն (երկու օրինակից), որը ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսավարող սուբյեկտին: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հինգ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված խախտումների հետ համաձայնվելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում ճշտված (ճշգրտված) հաշվետվությունները: Արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի

ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները:

Կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումների, անճշտությունների, անհամապատասխանությունների բացակայության դեպքում դրա վերաբերյալ կազմվում է տեղեկանք:

Կամերալ ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումները ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում:

## **Հարց**

*Ում կողմից է տրվում հարկային մարմնի կողմից ստուգում իրականացնելու մասին հրամանը կամ հանձնարարագիրը*

### **Պատասխան**

Մինչև ստուգում իրականացնելը հարկային մարմնի ղեկավարի՝ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի կողմից տրվում է ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր:

Հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային տեսչության պետին հետևյալ ստուգումների դեպքում

- ակցիզային դրոշմանիշերի կիրառման,
- հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման,
- հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների,
- տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների,
- առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման,
- չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված:

## **Հարց**

***Ստուգման հրամանում կամ հանձնարարագրում ինչ տեղեկություններ պետք է նշվեն***

### **Պատասխան**

Հարկային մարմնի ղեկավարը կամ հարկային տեսչության պետի կողմից ստուգում իրականացնելու մասին տրվող հրամանում կամ հանձնարարագրում պարտադիր նշվում են

- ստուգում իրականացնող մարմնի անվանումը,
- ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը,
- ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը,
- ստուգման հարցերը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակն ու ժամկետը,
- ստուգման իրավական հիմքերը:

Հարկային մարմինների կողմից առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հայտնաբերմանն ուղղված ստուգումների ժամանակ ստուգման հրամանում (հանձնարարագրում) նշվում են ստուգումն իրականացնող մարմնի անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման նպատակը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման իրավական հիմքերը: Ընդ որում, ստուգում կատարող պաշտոնատար անձինք ստուգումն իրականացնելու մասին հրամանում կամ հանձնարարագրում նշված նպատակի (հարցերի) շրջանակներից դուրս գալու իրավունք չունեն:

## **Հարց**

***Տնտեսավարող սուբյեկտին ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ծանուցման կարգը***

### **Պատասխան**

Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Հարկային մարմնի կողմից ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի օրինակը տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին անմիջապես ստուգումն սկսելուց առաջ հետևյալ ստուգումների դեպքում

- ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման ճշտության,
- հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության,
- առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման ճշտության,
- առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման,
- արժուքային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման, տարադրամի փոխանակման կետերի կամ արժուքային դիլերների կողմից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման ճշտության,
- պարզեցված հարկ վճարողների մոտ իրենց պատկանող ապրանքային մնացորդների,
- պարտադիր սույնալական ավազակագրության վճարների, վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարման, իսկ պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հրամանագրերի վարման ճշտությանն ուղղված
- չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է ստորագրել հրամանի կամ հանձնարարագրի մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է հարկային մարմնի պաշտոնատար անձին:

## **Հարց**

***Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ տարվա ընթացքում քանի ստուգում կարող է իրականացվել***

## **Պատասխան**

Հարկային մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգում կարող է իրականացվել օրացույցային տարում ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ՝

- ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության,
- հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության,
- առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման ճշտության,
- առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման,
- արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման,
- տարադրամի փոխանակման կետերի կամ արժույթային դիլերների կողմից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման ճշտության,
- պարզեցված հարկ վճարողների մոտ իրենց պատկանող ապրանքային մնացորդների,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների,
- վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարման, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հրամանագրքերի վարման ճշտությանն ուղղված,
- չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված,
- հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկ վճարողի այլ հարկային պարտավորություններին հաշվանցելուց կամ նրան վերադարձնելուց առաջ կատարվող ստուգումների:

## **Հարց**

### ***Ինչ ժամկետներ են սահմանված ստուգում իրականացնելու համար Պատասխան***

Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր յուրաքանչյուր տարվա համար: Ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստաթղթի սկսելու օրը: Ստուգումը սկսելու օր է համարվում հարկ վճարողի (բացառությամբ առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ անցկացվող ստուգման) մոտ պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան հարկային մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով, այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Ստուգման ժամկետի երկարաձգման մասին պետք է տեղեկացվի տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Ստուգման փաստաթղթի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

## **Հարց**

### ***Ստուգման կասեցման հիմքերը***

### **Պատասխան**

Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման

վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկույագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը:

## **Հարց**

*Ինչ տեղեկություններ են գրանցվում տնտեսավարող սուբյեկտների ստուգման մատյանում*

### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանը պարունակում է տեղեկություններ՝ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման նպատակի (հարցերի), ժամկետների մասին: Ստուգման մատյանը պահվում է տնտեսավարող սուբյեկտի մոտ:

## **Հարց**

*Ստուգման արդյունքների ամփոփան կարգն ու ժամկետները*

### **Պատասխան**

Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ՝ երկու օրինակից, եթե տնտեսավարող սուբյեկտն ունի պետական բաժնեմաս՝ երեք օրինակից, խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք, որում արձանագրվում են տեղեկանքը կազմելու ամսաթիվն ու տեղը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները, ակտի դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչների բացատրությունները (հատուկ կարծիքը), օրինակների քանակը և հերթական համարը:

Ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտման կոնկրետ ժամանակը, հղում՝ համապատասխան փաստաթղթերին, պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:



Կազմված ակտն ստուգում իրականացնող անձինք 3 օրվա ընթացքում պետք է ներկայացնեն տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմված ակտն ստորագրում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարածայնությունների ղեկավարը կողմերի կարծիքներն արձանագրվում են ակտում: Ակտն ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից ակտն ստորագրելու և տարածայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 3 աշխատանքային օրը, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3.0 մլրդ. դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ 15 աշխատանքային օրը: Ակտի պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին: Եթե վերջինս պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա ակտի պատճենի մեկ օրինակն ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմնին:

## **Հարց**

### ***Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց իրավունքները Պատասխան***

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք ունեն հետևյալ իրավունքներ.

- ա)** տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ.
- բ)** պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրակառավարող ստուգման նպատակներին.
- գ)** անհրաժեշտության դեպքում ստուգումներին ներգրավել տնտեսավարող սուբյեկտի մասնագետներին՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ.
- դ)** սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն.

- ե) առաջարկություններ ներկայացնել ստուգում նշանակող պետական մարմնի ղեկավարությանը՝ վարչական կամ քրեական պատասխանատվություն առաջացնող բացահայտված չարաշահումների և այլ խախտումների կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար.
- զ) վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Փաստաթղթերը վերցնելիս ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք կնիքով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչներին.
- է) իրականացնել ստուգման նպատակի հետ կապված չափագրումներ, կշռող, չափող և մանատիպ այլ սարքերի ու սարքավորումների շահագործման ճշտության հսկիչ ստուգումներ.
- ը) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակալ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ.
- թ) ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել անցկացնելու հիմնական ֆոնդերի, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և հաշվարկների գույքագրումներ: Գույքագրում կատարելիս ներգրավել տնտեսավարող սուբյեկտի համապատասխան աշխատակիցների և մասնագետների.
- ժ) անհրաժեշտության դեպքում գույքի նկատմամբ իրավունքները գրանցող, հարկային, մաքսային և այլ պետական մարմիններից, կազմակերպություններից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պահանջել ստուգվող սուբյեկտի գործարքների հաշիվների շարժի մասին տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ.
- ժա) ստուգման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով ստուգմանը ներգրավել տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող տնտեսական գործունեության ոլորտի համապատասխան մասնագետների և թարգմանիչների:

## **Հարց**

### ***Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց պարտականություններ***

#### **Պատասխան**

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են՝

- ա)** պահպանել ստուգման հետ առնչվող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- բ)** առանց տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության՝ չհրապարակել ստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած տնտեսավարող սուբյեկտի գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, գործունեության մասին ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, ինչպես նաև առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններ.
- գ)** պահպանել տնտեսավարող սուբյեկտի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքները և շահերը.
- դ)** չխոչընդոտել տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին.
- ե)** իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնել տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց.
- զ)** ստուգման ընթացքում բացառապես հիմնվել «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական-նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրում» հրապարակված օրենքների և այլ իրավական ակտերի վրա,
- է)** ստուգման ընթացքում գրավոր պատասխանել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցման.
- ը)** օրենքով սահմանված դեպքերում իրականացվող կրկնակի ստուգման ժամանակ խախտումներ հայտնաբերելիս կիրառել միայն ստուգման հարցին (հարցերին) առնչվող խախտումների համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

## **Հարց**

***Ստուգվող տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքները***

### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

- ա) արգելել ստուգումը կամ ստուգումն իրականացնող անձանց փաստաթղթեր տրամադրելը, եթե ստուգողները խախտել են ստուգումների անցկացման կարգն ու ժամկետները՝ այդ մասին նույն օրը գրավոր ծանուցելով ստուգում իրականացնող հարկային մարմնին.
- բ) ծանոթանալ ստուգումների ակտերին.
- գ) ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարույցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները.
- դ) պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում.
- ե) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասություններից, ինչպես նաև ստուգման նպատակներից և ծրագրերից չբխող պահանջներ.
- զ) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի շահերի պաշտպանության նպատակով՝ ստուգման ցանկացած փուլում ստուգմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների:

## **Հարց**

***Ստուգվող տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց պարտականությունները***

### **Պատասխան**

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք ունեն հետևյալ պարտականությունները՝

- ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.

- բ) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները (լուսապատճենահանման ծախսերը կատարվում են ստուգումն իրականացնող մարմնի կողմից), կրկնօրինակները և այլ տեղեկություններ: Պահանջը վերանալուն պես, բայց ոչ ուշ քան 3 տարույ, փաստաթղթերը վերադարձվում են տնտեսավարող սուբյեկտին:
- գ) անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար:
- դ) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները՝ այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին:

## **Հարց**

***Ստուգումն իրականացնող անձանց գործողությունների բողոքարկման կարգն ու ժամկետները***

### **Պատասխան**

Ստուգումն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները 30 օրվա ընթացքում կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են ստուգող անձինք, կամ դատարան: Տնտեսավարող սուբյեկտները հարկային մարմին ներկայացնում են գրավոր դիմում-բողոք՝ ներկայացնելով իրենց անհամաձայնությունը իրենց իրավունքների և օրինական շահերի դեմ ուղղված՝ ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների հետ: Բողոքները վերադասության կարգով քննության են առնվում և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Բողոքի ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

Ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

---

## Հարց

*Հարկային օրենսդրության պահանջների խախտման համար ինչ պատասխանատվություն է սահմանված հարկային օրենսդրությամբ*  
**Պատասխան**

Հարկային օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանված է՝

- հարկը սահմանված ժամկետում չվճարելու համար ,
- հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկները (հայտարարագրերը) սահմանված ժամկետից երկու ամսից ավել ուշացնելու համար,
- հաշվապահական հաշվառում կամ այլ հաշվառում չվարելու, կամ սահմանված կարգի խախտումով վարելու, հաշվարկները, հայտարարագրերը, հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերը սխալ կազմելու համար,
- հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար,
- առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող ապրանքները սահմանված կարգով չգրանցելու համար,
- արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները սահմանված կարգով չգրանցելու համար,
- ապօրինի գործունեության համար,
- անապրանք փաստաթղթեր դուրս գրելու և ձեռքբերելու համար
- շահութահարկի հաշվարկում վնասն ավել ցույց տալու համար
- եկամտահարկի տարեկան հայտարարագրում վնասն ավել ցույց տալու համար
- ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություն չներկայացնելու համար
- սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար
- դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու համար,
- պարզեցված հարկ վճարող համարվելու համար իրացման շրջանառության վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություն ներկայացնելու համար,

- իրականացվող գործունեության տեսակների վերաբերյալ, որոնք իրականացնելու դեպքում անձինք չեն կարող համարվել պարզեցված հարկ վճարող, սխալ տեղեկություններ ներկայացնելու համար
- պարզեցված հարկ վճարող համարվելու համար՝ ներմուծված և չիրացված ապրանքների մնացորդների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու համար,
- հաստատագրված վճարի չափը չհիմնավորված լինելու համար,
- առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից առևտուր իրականացնող անձանց վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու սխալ ներկայացնելու համար
- ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման գործունեություն իրականացնողների կողմից գազի իրացված ծավալների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու համար

## **Հարց**

*Հարկը սահմանված ժամկետում չվճարելու համար ինչ պատասխանատվություն է սահմանված*

### **Պատասխան**

Հարկ վճարողը (հարկային գործակալը) հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով: Նշված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Տույժի հաշվարկը սկսվում է տվյալ տվյալ հարկատեսակի համար օրենքով սահմանված վճարման ժամկետի հաջորդ օրվանից: Եթե հարկի վճարման ժամկետը հանրնկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հարկի վճարման ժամկետը տեղափոխվում է մինչև հաջորդ աշխատանքային օրը:

## **Հարց**

*Ինչ ժամկետ է սահմանված տույժերի և տուգանքների վճարման համար*

### **Պատասխան**

Հարկային օրենսդրության պահանջների խախտման համար կիրառված տույժերն ու տուգանքները հարկ վճարողները բյուջե են վճարում հարկային տեսչության կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո 10-օրյա ժամկետում: Նշված ժամկետում վճարվում են նաև թաքցրած կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը:

## **Հարց**

*Ինչ պատասխանատվություն է սահմանված՝ հարկ վճարողի կողմից դուրս գրվող հարկային հաշիվների սխալ լրացման համար.*

### **Պատասխան**

Հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվի մեջ պետք է պարտադիր նշվեն հետևյալ տվյալները.

- հաշվի հերթական համարը և դուրս գրման ամսաթիվը,
- ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի անվանումը և հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),
- ապրանքներ կամ ծառայություններ ստացող անձի անվանումը և հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը,
- ապրանքների անվանումը և քանակը կամ ծառայությունների տեսակը և ծավալը,
- ապրանքների գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայության սակագինը և հատուցման ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի,
- հաշվարկված ԱԱՀ-ի գումարը՝ առանձին տողով:
- ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված այլ տեղեկություններ:

Հարկային հաշիվներում նշված տվյալների սխալ կամ խախտումով լրացման համար սահմանված է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի գումարի տաս տոկոսի չափով:



## **Հարց**

*Ինչ պատասխանատվություն է սահմանված հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար.*

### **Պատասխան**

Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում՝ հարկ վճարողի կողմից ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար, հարկ վճարողից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով:

**Օրինակ.** *Ամսական ԱԱՀ վճարող համարվող «Բ» ՍՊԸ-ն 2006թ. օգոստոս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում, որպես ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն ցույց է տվել 38000.0 հազ. դրամ, իսկ բյուջե հաշվարկման ենթակա ԱԱՀ-ի գումար՝ 7600.0 հազ. դրամ: Նույն հաշվետու ժամանակաշրջանի համար, որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումար՝ ցույց է տրվել 6100.0 հազ. դրամ: Բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմել է 1500.0 հազ. դրամ:*

*Ստուգմամբ պարզվել է, որ այդ նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կազմել է ոչ թե՝ 38000.0 մլն. դրամ (ինչպես ցույց է տրվել ԱԱՀ-ի հաշվարկում), այլ՝ 39320.0 հազ. դրամ, որի ԱԱՀ-ի գումարը կազմել է 7864.0 հազ. դրամ: Արդյունքում, ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը 1320.0 հազ. դրամ պակաս ցույց տալու հետևանքով՝ պակաս ԱԱՀ է հաշվարկվել 264.0 հազ. դրամ: Տվյալ դեպքում, բյուջե լրացուցիչ գանձման ենթակա է 264.0 հազ. դրամը և տուգանք՝ 132.0 հազ. դրամ (լրացուցիչ գանձման ենթակա ԱԱՀ-ի գումարի 50%-ի չափով):*

## **Հարց**

*Ինչ պատասխանատվություն է սահմանված հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում՝ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները ավել ցույց տալու համար.*

### **Պատասխան**

Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում՝ հարկ վճարողի կողմից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի ավել ցույց տալու համար, հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել հաշվանցված ԱԱՀ-ի գումարի 50%-ի չափով:

**Օրինակ.** Եռամսյակային ԱԱՀ վճարող համարվող «Ա» կազմակերպությունը 2006թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում, որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումար ցույց է տվել 3300.0 հազ. դրամ, իսկ բյուջե հաշվարկման ենթակա ԱԱՀ-ի գումար՝ 1700.0 հազ. դրամ: Այդ հաշվետու ժամանակաշրջանի համար, հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմել է 1600.0 հազ. դրամ:

Ստուգմամբ պարզվել է, որ այդ նույն հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմել է ոչ թե՝ 3300.0 հազ. դրամ (ինչպես ցույց է տրվել ԱԱՀ-ի հաշվարկում), այլ՝ 2000.0 հազ. դրամ: Արդյունքում, ավել հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումար է ցույց տրվել 1300.0 հազ. դրամ: Տվյալ դեպքում, չնայած բյուջե վճարման ենթակա լրացուցիչ ԱԱՀ-ի գումար չի առաջանում, սակայն ավել ցույց տրված հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի (1300.0 հազ. դրամ) 50% -ի չափով գանձվում է տուգանք, որը կկազմի 650.0 հազ. դրամ:

## **Հարց**

**Հաստատագրված վճարի չափի չհիմնավորված լինելու դեպքերը**

### **Պատասխան**

Հաստատագրված վճարի չափը համարվում է չհիմնավորված, եթե

- հաստատագրված վճար վճարողի կողմից ներկայացված ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցների մեծությունը ցածր են հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մեծությունից,
- մինչև գործունեություն սկսելը, վերսկսելը հաստատագրված վճար վճարողի կողմից չի ներկայացվել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն:

## **Հարց**

**Հաստատագրված վճարի չափը չհիմնավորված լինելու դեպքում տուգանքի ինչ չափ է սահմանված**

### **Պատասխան**

Հաստատագրված վճարի չափը չհիմնավորված լինելու դեպքում հաստատագրված վճար վճարողից գանձվում է տուգանք պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի 50 տոկոսի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հե-

տո մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրելու դեպքում տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի գումարի չափով:

## **Հարց**

***Հաստատագրված վճարի մեծությունը չհիմնավորված լինելու դեպքում ինչ հարկային պարտավորություն է առաջադրվում հաստատագրված վճար վճարողին***

### **Պատասխան**

Հաստատագրված վճարի մեծությունը չհիմնավորված լինելու դեպքում հաստատագրված վճար վճարողը վճարում է

- պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարը, տուգանք այդ վճարի 50 տոկոսի չափով (մեկ տարվա ընթացքում նույն խախտման համար՝ 100 տոկոսի չափով),
- ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը սխալ կազմելու համար տուգանք՝ այդ խախտման հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հաստատագրված վճարի գումարի 10 տոկոսի չափով,
- ինչպես նաև օրական տույժեր՝ հաստատագրված վճարի վճարման համար սահմանված ժամկետից ուշ վճարելու համար:

Հաստատագրված վճարի չափը չհիմնավորված լինելու դեպքերում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ, 27-րդ հոդվածներով սահմանված պատասխանատվության նորմերը չեն կիրառվում:

## **Հարց**

***Եթե կազմակերպության կողմից չեն պահպանվում կանխիկ վճարումների համար օրենքով սահմանված սահմանափակումները, ապա ինչ պատասխանատվություն է կիրառվում կազմակերպության նկատմամբ***

### **Պատասխան**

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Սահմանափակումների չպահպանելը արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

## **Հարց**

***Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքերում չգրանցելու դեպքում ինչ պատասխանատվություն է կիրառվում***

### **Պատասխան**

Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելը արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում դրանք կրկին չգրանցելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Մասնավորապես, դրամարկղային գործառնությունները համարվում է դրամարկղային գրքում չգրանցված, եթե

- դրամարկղ մուտքագրված կամ դրամարկղից ելքագրված գումարների համար կազմված դրամարկղային մուտքի և ելքի օրդերների համարն ու գումարը ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում չեն գրանցվել դրամարկղային գրքում.
- տեղեկագրով կանխիկ դրամ վճարելու դեպքում՝ ելքի օրդերի համարն ու գումարը վճարումների դադարեցման օրվա ընթացքում չեն գրանցվել դրամարկղային գրքում:

## **Հարց.**

***Որ խախտումներ են համարվում դրամարկղային գրքի վարման կանոնների խախտում և ինչ պատասխանատվություն է սահմանված այդ խախտման համար***

### **Պատասխան**

Դրամարկղային գրքի վարման կանոնների խախտում է համարվում՝

- հարկային մարմնի կողմից չկնքված դրամարկղային գրքի վարումը,
- գանձապահի կողմից դրամարկղային գրքում գրանցումները գրչով, պատճենահան թղթի օգնությամբ (2 օրինակից) չկատարելը,
- յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա, իսկ տեղեկագրով կանխիկ դրամ վճարելիս՝ վճարումների դադարեցման օրվա ընթացքում դրամարկղային գրքում գրանցում չկատարելը,
- դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը սահմանված ժամկետում և կարգով չկատարելը:

Գրամարկղային գրքի վարման կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման կանոնների խախտումը արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում դրանք կրկին խախտելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

## **Հարց**

*Գրամարկղային գործառնությունների խախտման համար կիրառված տուգանքների վճարման ինչ ժամկետներ են սահմանված*

### **Պատասխան**

Գրամարկղային գործառնությունների իրականացման օրենքով սահմանված պահանջները խախտելու համար կիրառվող տուգանքը ենթակա է վճարման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց (արձանագրելուց) հետո տասնօրյա ժամկետում:

## **Հարց**

*Տնտեսավարող սուբյեկտի կողմից առանց հսկիչ-դրամարկղային մեքենա ներդնելու կանխիկ դրամով հաշվարկներ կատարելիս ինչ պատասխանատվություն է կիրառվում*

### **Պատասխան**

Օրենքով սահմանված ոլորտներում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով

դրամական գործարքներ իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկ-դային մեքենայի բացակայության համար տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 150 հազար դրամի չափով: Տուգանքը նշանակելույ հետո մեկ տարվա ընթացքում նշված խախտումը կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 300 հազար դրամի չափով:

### **Հարց**

***Տուգանքի ինչ չափ է նախատեսված հսկիչ-դրամարկդային մեքենաների շահագործման կանոնների խախտման համար***

### **Պատասխան**

Հսկիչ-դրամարկդային մեքենաների շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկդային մեքենաների կիրառման համար տնտեսավարող սուբյեկտը տուգանվում են 75 հազար դրամի չափով: Տուգանքը նշանակելույ հետո մեկ տարվա ընթացքում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 150 հազար դրամի չափով, իսկ տուգանքը նշանակելույ հետո մեկ տարվա ընթացքում նշված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 300 հազար դրամի չափով:

### **Հարց**

***Տուգանքի ինչ չափ է նախատեսված սահմանված կարգով հարկային մարմնի կողմից չգրանցված հսկիչ-դրամարկդային մեքենա շահագործելու դեպքում***

### **Պատասխան**

Հսկիչ-դրամարկդային մեքենաների գրանցման կարգի խախտմամբ հսկիչ-դրամարկդային մեքենաների կիրառման համար տնտեսավարող սուբյեկտը տուգանվում են 75 հազար դրամի չափով: Տուգանքը նշանակելույ հետո մեկ տարվա ընթացքում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 150 հազար դրամի չափով, իսկ տուգանքը նշանակելույ հետո մեկ տարվա ընթացքում նշված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը տուգանվում է 300 հազար դրամի չափով:

## Հարց

*Ինչ առանձնահատկություն է սահմանված «Հսկիչ-դրամարկդային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար նշանակված տուգանքների վճարման մասով*

## Պատասխան

«Հսկիչ-դրամարկդային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար նշանակված տուգանքները հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում չմուծված տուգանքի չափը կրկնապատկվում է:

**ԻՆՔՆԱԳՆԱՇԱՏՄԱՆ  
ՇԱՐԿԱՅԻՆ ՇԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՇԱՃԱԽԱԿԻՈՐԵՆ ՏՐԿՈՂ ՇԱՐՑԵՐԻ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ**

**Էջադրումը և ձևավորումը  
Ա. Հարությունյանի**

**Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԴԱՐ» ՍՊԸ  
Տպագրությունը՝ «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ  
Տպաքանակ՝ 500**